Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5594
5595
5596
5597
5598
5599
5600

9(47.925)
S-46

БИБЛІОТЕКА
Г. А. ХАМАТЬЯНЦА
№ 65.

9(47.925)
Տ-46 ա

ԽՕՍՔ ԶՀԱՅՐԵՆԵԱՑ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՊԱՐՏԻԶԱԿՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

Կ. ՊՕԼԻՍ
ԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Դ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

1879

12955

4886
38

2004

Հ Օ Դ

Առ. Ամենապատիւ. Տ. ՆԵՐՍԷՍ
Արքեպիսկոպոս Եւ. Պատրիարք Կ. Պոլսոյ

Տէ՛ր Հայր,

Ձեր հնգամեայ պատրիարքական շրջանին մէջ եթէ ունեցաք քանի մը մեծ գործ, ի նոցանէ մին՝ ի Բարձր եւ ի Փոքր Հայս առաքելութիւն մը յղելդ եղաւ։ Սոյն առաքելական պաշտօնը ժողովրդեան վերայ բարոյական անհուն արդիւնք ունենալէ զատ՝ Հայաստան Ձեզ ներկայացաւ իւր Ժողովրդովը, Հայրենիքովը եւ այլազգի, քաղաքներովն ու գիւղերով, լեռներովն ու դաշտերով, իւր ամէն ներքին եւ արտաքին երեւութովը։ Բաց յայտնանէ՝ ինձ վիճակուած բաժինն, որ արցունքով եւ արիւնով ողողուած էր, մաղ մնաց որ աշխարհի ի հանդէս եկնէր մի ամենասարսափելի տեսարանով։ Եթէ Դուք՝ Ձեր նախորդներուն նման դիտէիք քաղաքական աշխարհի նկատումներն ի մասին Հայաստանեայց, գաղթականութիւնն՝ որ յիսուն տարի յառաջ կործանած էր Հայաստանը, նոյնը պիտի ընէր անշուշտ, առաջինէն տխուր եւ տարօրինակ կերպով։ Մեր ժողովուրդն՝ որ իւր հայրենիքէն դուրս հողի եւ փողի ակնկալութեան մէջ կ'երազէր, այս անգամ իւր տնակն ու պարէն այրելէ զատ, ոչ թէ միայն օտարին հողէն ու փողէն պիտի զրկուէր, այլեւ իւր արտին հատորներն ալ զոհելու դիտիկոր վերաղաս

նալ պիտի ստիպուէր անտուն եւ անօթի, տկլոզ եւ թշուառ։ Հրահանգներդ՝ զորս առաքեալդ ի գործ դրաւ, յաջող ելք մը ունեցան ըստ կարելւոյն։ Ձեր վերայ ոչ թէ Վ.սեմ. Լազարէֆի եւ Տէր Ղուկասովֆի նման հանճարեղ եւ ուժեղ Հայ անձեր ըսքանչացան, այլեւ նոյն իսկ Ռուս բարձրաստիճան սպայներ եւ Փիւրտ պէյեր։ Այսպէս հարիւր հազարաւոր Հայաստանեայք երբ զՁեզ կ'օրհնէին, հոս յաչաղկոտ մարդիկ կը սնոտիաբանէին, եւ այն գործն ու գործիք՝ որ մեծ գովեստի եւ խրախուսի արժանի էին, անյիշատակ կը մնային։ • • • բայց Աստուած եւ Ազգայինն պատմութիւն ո՛չ ընաւ ի մոռացօնս պիտի թողու, որք յանուն հայրենեաց օգտին վաստակեցան, քրտնեցան եւ զոհեցան։ Ուստի եւ սոյն գրկոյկը, որ Հայաստանի եւ Հայաստանցւոց արդի եւ նախնի վիճակին մէկ մանրանկարն է, զոր Օրթաքէօյի լսարանի մէջ ի հանդէս հանի, ըստ յատուկ թախանձանաց ազգասէր մերայնոց եւ օժանդակութեամբ ազնիւ բարերարի ուրուք՝ Ձեր յիշատակաց արժանի անուան կը նուիրեմ։

1879 Ապրիլ 2

Խոնարհ որդեակ Ձեր
Վ.ՈՀԱՆ Վ.ԲԷՐԲԵՐԵԱՆ
Պ-ՐՊԷՆԻՕՅ

ԽՕՍՔ ՁՀԱՅՐԵՆԵԱՑ

Ա.

Նախաբան։ — Պոնտական Հայք։ — Զարշամ.ոն, Տրապիզոն եւ Կիւմիւշխանէ։ — Խաղտիք։ — Համշէն եւ Արդուին, Արտահան եւ Արտանուչ։ — Բարձր Հայք։ — Բաբերդ եւ Սպեր, Կիսկիմ եւ Թորթում, Դերճան եւ Երզնկա, Կամախ եւ Քղի, Ղուզիչան եւ Տէրսիմ, Կարին եւ Բասէն, Պայազիտ եւ Ալաշկերտ։

Աղնիւ Տեարք և Տիկնայք,

Ուրախ եմ, որ այժմ պատիւ կ'ունենամ առ Ձեզ խօսիլ, առ Ձեզ՝ որ լի անշուշտ համակրանօք և փութաքանօք յանուն մեր Հայաստան հայրենեաց հոս ակմբեալ էք լսել ինձ։ ինձ՝ որ ի մերն Հայաստան աշխարհ հերու այցելութեան ունեցայ պաշտօն։ ինձ՝ որուն այս երիցս վիճակեցաւ յանուն ապագայի հայրենեաց՝ մեր հին երկիրը վարէն վեր չափել։ Թափառեցայ մերթ վարժապետ և մերթ վարդապետ։ Դրեթէ 13 տարի յառաջ լի պատանեկան խանդով և յուսով Պոլսոյ փողոցներէն բարձրացած էի ի բար-

ձունս Ցօրոսի։ Հոն ի Զէյթին եռամեայ վարեցի պաշտօն դաստիարակի և գրեթէ ձրի։ Բանին լուսով յաջողիլ կը յուսայի, ինչ որ կարելի չէր եղած սուրով։ Բայց դի լուսոյ ծաւալն ընդարձակելու համար բարձր կարողութեան մը պէտքը կար, երկիցս յԵգիպտոս և ի Պօլիս փոխեցայ։ բայց աւա՜ղ, այն ժամանակուան՝ ազգին ամենէն մեծ և հարուստ, աղնուական ու հանճարեղ մարդիկ կարծուածները վրաս ծիծաղեցան, ես ալ նոցա վերայ ծիծաղելով առանձնացայ, վանական եղայ։ Բայց դի սիրտս և հոգիս ի յուշ մեր հայրենեաց կը յուզուէն միշտ, և որովհետև արտաքոյ հայրենեաց՝ հայրենեաց վրայօք խորհիլն ու գործել այնքան օգտակար դաւանողներէն չէի, ուստի վերստին թափառեցայ. յուսացայ բայց յաճախ յուսահատեցայ, վասն դի ի Հայաստան ուր մարդկար, հոն կամ գրամ չկար և կամ լոյս, այսինքն ի պատրաստի կարելի միջոցներ չ՝կային։ Ամէն ուրեք ուր հայ մարդը կ՝ապրեր, հոն խաւարն ու աղքատութիւն տիրած էր։ Հազարամեայ զարհուրելի հարստահարութեան մը տակ՝ զոր դիտէք և լսած էք ազգային պատմութենէ և աւանդութենէ, ժողովուրդն ապուշ աղքատ դարձած էր, իսկ

ժողովրդէն վեր եղող դասը բռնաւոր կամ բռնաւորին գործակից։ Դիտեմ, դուք պիտի տխրիք և դուցէ ձենէ շատերն իսկ սրտմբոտին, որոց ականջներն արդէն վարժ իսկ են սուտ և փաղաքուշ խօսքեր լսելու Հայաստանի վրայօք. դիտեմ, ժողովուրդը կը հակի աւելի՝ արտաքին շպարի և գոյնի, բայց ես այն պարտաւորութեանս համեմատ՝ որ առ Աստուած և առ Մայր-Հայաստան, ճշմարտութիւնն ասա և ամէն ուրեք խօսելէ պիտի չդադրիմ։

Ես Ձեր առջև պիտի դնեմ, աղնիւ Տեարք և Տիկնայք, մեր հայրենիքն իւր արդի ճշմարիտ վիճակովը։ Այժմէն յիշատակելով միանգամայն թէ տարաշխարհիկ Հայն մինչև ցարդ ի՞նչ արած ունի իւր հայրենեաց։ Մինչ սա ինքն գաղթական Հայն կը պարապէր իւր պանդխտութեան շրջանակին մէջ, դէթ միանգամ յիշե՞ց, թէ անդին Հայաստան մը կայ, որ իւր հայրենիքն է. գոնէ սթափեցա՞ւ պանդուխտ Ցունին օրինակէն, որ կէս դար՝ աքանչելի իմն տքնելով՝ կարծես նոր ի նորոյ հայրենիք մը կ՝ստեղծէր, արդի Հելլենաստա՞նը։ Ուր յունական տարրն ամէն կողմէ շատ ստորին էր։ Ո՞ր ժամանակի մէջ մեք նոյն իսկ մեր Հայաստանն աշխարհագրապէս

ուսումնասիրած էինք. հաւատացէք, նոքա իսկ, որք Հայաստանի դատին տէր հանդիսացած էին աշխարհի առջև, ունէին արդեօք մեր երկրին վրայօք վիճակագրական (սթաթիսք) տեղեկութիւններ, այնքան, որքան պէտք էր։ Ո՞ր ժամանակի մէջ տարաշխարհիկ Հայն իւր Հայրենեաց մէջ հասարակաց շէնք մը, հիւանդանոց և կամ դպրոց եւայլն, կառուցած էր. կամ թէ՝ «սա Հայրենիքս է» ըսելով հոն օգտակար նպատակի մը համեմատ մեծ գործոյ մը ձեռարկած և զայն շարունակած էր։ Երբ այս ամէնն այսպէս, ուրեմն ի՞նչ պիտի ըսէինք այն աստուածային և մարդկային արդարութեան, որ մեր Հայրենիքը մեր աղդին պիտի շնորհէր, մինչ Հայրենիք ու աղդ իրարմէ անչափ հեռացած էին, գո՛դ իրարու անծանօթ էին։ Մի զարմանայք, Ցեարք և Տիկնայք, այս խօսածներուս վերայ. օրինակաւ հաստատեմ։ Տարաշխարհիկ Հայն երկու Հայաշատ կեդրոն ունի, Կոստանդնուպոլիս և Թիֆլիս։ Այս երկու քաղաքներու ամենէն հռչակաւոր տպարաններէն Հայաստանի վրայօք վիճակագրական տեղեկութիւնք հրատարակուած են, մինչ Թիւրքին պաշտօնական վիճակացոյցը (սալնամէ) կը դրէ ճիշդ Թորթում մերոնք զայն

Թորդում կը դրեն, որ է սխալ։ Թիւրքը ճիշդ Կիսկիմ և Բղի, մերոնք Բէսքիւմ և Բիյֆի, նոյնպէս Կիւրիւնը Կերօն, Մոկսը Մէքէս, Կարճբկանը Բաջական, Մօտքին, Մուտքի, Վարդօն, Վարդու, Խոյթը Հայութ եւայլն։ Իսկ մեր անհոգութեանն ուրիշ մէկ օրինակ ահաւասիկ. Թիւրքիոյ այս վերջին պատերազմի ատեն երբ մեր Հայաստանը կը կոխոտուէր երկուստեք։ Այն դաւառներ՝ ուր բանակներ կը խաղային և ժողովրդեան վրայ կը ծանրանային, Սպեր, Դերջան, Եղնկա, Կամախ և Բղի անտէր էին, պաշտօնական մարդ՝ հովիւ առաջնորդ չկար, որով ժողովուրդը Պատրիարքարանի հետ հաղորդակցելով կարենար իւր անտէրունչ վիճակն աղդին և բովանդակ մարդկութեան առջև դնել։ Այդ 70,000 ժողովուրդը լքուած էր մնէ, և ցարդ իսկ պաշտօնական տեղեկագրիս Պատրիարքարանի մատուցուելէ վեց ամիս յետոյ, մեր սահմանադրական վարչութենէն լքուած է։ Ինչ և իցէ, չերկարեմ, կանխաբանական դիտողութիւններ են այս ամէնը. իմ նպատակս է, ո՛ այնիւ Ցեարք և Տիկնայք, որ դուք ղդածուիք, և գիտակ լինիք, որ մեք մեր Հայրենեաց առջև յանցապարտ եմք, և թէ մեր սոյն յանցանքը

քաւելու համար պարտիմք դէթ յայսմհետէ անվհատ գործել, գործե՛լ միահամուռ և միութիւն, ապա թէ ոչ՝ լուսաւորեալ և զարգացեալ դարուս մէջ յաւիտենական ամօթ և նախատինք պիտի ունենամք բովանդակ մարդկութեան մէջ բոլոր յառաջադէմ ազգերու առջև, և թէ պատմութիւնը յաւիտենապէս պիտի դատապարտէ ներկայ հայկական ժողովուրդն ու սերունդը։

Արդ կ՚աղաչեմ, աղնիւ Տեարք և Տիկնայք, ուշիմ ուշով լսել ինձ, կանխաւ դիտելով՝ որ իմաստասիրական և քննադատական օրինօք երկարօրէն խօսիլն ոչ իմ ուսումնական վիճակս կը ներէ և ոչ ժամանակիս սղութիւնը, ես միայն իբր ականատես ուղղեր պիտի խօսիմ, ուրեմն առաւել մի տեղեկաբեր եմ և ոչ այլ ինչ։

Այցելութեանս առաջին դաւառն էր Ճանիկ, որոյ 20,000 էն աւելի Հայերն էին դաղթական Համշինէն, որպէս Համշինցիքդ ես իսկզբան՝ Անիէն։ Գրեթէ 200 տարի յառաջ Համշինցիք հարստահարուելով յանուն կրօնի, ճարահատած կը թողուն տեղերնին, և մէկ կողմէն կը դաղթեն ի Ծովեզրն ի Սիւրմէնէ, և միւս կողմէն ի Ճանիկ։ Ի Սիւրմէնէ դաղթողք կրկին հարստահարուելով՝

ալ բոլորովին յուսահատած՝ մահմեդական կը լինին, որք և մինչև ցարդ հայերէն կը խօսին, իսկ միւսներն ի Ճանիկ դաղթողք՝ մերթ տաճկընալով և մերթ աւելի յամառելով և ամէն զոհողութիւն յանձն առնելով՝ ոչ տեղերնէն ա՛լ կը պճրտան, և ոչ ազգայնութիւننին և կրօնին կը կորուսանեն մինչև հիմա. բայց որովհետև մեր ազգին գլխէն ձիւնը պակաս չէ, հաղիւ թէ այդ ժողովուրդն արդի քաղաքակրթութեան շնորհիւ աղատուած էր, յանկարծ Թուրքիոյ պետութիւնն անպիտան ու գող Չէրքէսներ (40,000) հոն կը տեղաւորէ, և այսպէս թէ նոյն իսկ Թիւրք և թէ Հայ ժողովրդեան հանդիստը կը վերդովի։ Իրիս դեռ՝ որ մեր Փոքր-Հայքէն կը ըղխի, Միհրդատայ յաւիտենական փառքն ու պարծանք եղող Ամասիոյ աւերակներուն մօտէն խոխոջելով՝ ասոի կը հոսի ի Սև ծով։ Ճանիկի Զարշամպահ քաղաքի հոյակապ շէնքը Հայոց եկեղեցին է միայն, քարուկիր և հոյակապ։ Քաղաքին բոլոր շէնքերն ամէնն ալ փայտաշէն են, չորեքշաբթի քաղաքին մանրավաճառը (պազար) լինելուն՝ քաղաքն առած է Զարշամպահ անունը։ Իրիս դեռ այս քաղաքը կիսելով՝ քրիստոնէից թաղը Թրքաց թաղէն կը զատէ, և կամուրջն դրե-

թէ ամեն տարի կը շինուի և կը փլի ի փառս տեղական վարչային շնորհալիութեանը։

Այս առաջնորդական վիճակն ունի 17 եկեղեցի և 31 դպրոց, զորս վիճակայինք կը հոգան միայն տարեկան հանգանակութեամբ, և ըստ կարելւոյն ունին ջանք յառաջադիմութեան։ Մօտ է Զարշամպահ քաղաքի և Թերմէ հին քաղաք, ուր ժամանակաւ հռչակաւոր են եղած Ամազոն (Միւսոսի) կանայք, որոց վրայօք հին պատմիչք տարօրինակ առասպելք հռչակած են։ Ի Թերմէ ևս կան քանի մը Հայ դիւղեր։

Թերմէէն ձիով կամ նաւակով հետզհետէ յիւնիա, ի Ֆաթսա, յՕրտու, ի Կերասօն, ի Տրիբօլ, ի Կէօրէլի և յԵլէդու հանդիպելով մնայ ի Տրապիզոն։

Թէև կան հետաքրքրական տեղեկութիւններ այս կողմերուն վրայ, և թէ սոքա իրենց հայկական դիւղերովն՝ որք աւելի Համշինէն դաղթական են, բաւական նշանակութիւն ունին, բայց զանց առնլով՝ Տրապիզոնի վրայօք խօսիլ սկսիմք։

Տրապիզոն քաղաք հին և հռչակաւոր, դաւառ Երբեմն պոնտական Հայոց, ուր Տորք, Արշակ և Միհրդատ դիւցազնութեան ասպարէզ ընտրեցին ի փառաւորութիւն Հա-

յաստանեայց, ուր և յետին ժամանակի մէջ Անիի վաճառման հանրածանօթ թուղթը Հայոյոյն կայսեր յանձնեցաւ ի յաւիտենական թշուառութիւն Հայաստանեայց։ Տրապիզոնի այժմեան Հայք ի վաղուց ունին բնակութիւն ասա, և կայ մի վանք, որ Յունաց Կիրակոս Ալէքս կայսեր ատենի ունի սոյն յիշատակագիր, 1324։ Թէև այդ թուականէն 400 տարի յառաջ ևս կառուցուած կ'աւանդըուի։ Այս քաղաքին մէջ կան հին շէնքեր և յունական եկեղեցիներ, որք այժմ՝ Դիւ փոխուած են։ Ժամանակաւ Յոյն աղնուականք տարուոյն ամէն օրուան համար մեծ ու փոքր եկեղեցիներ շինած են եղեր, որոց 24ը մնայն կայ այժմ, և Յունաց սեփական են։ Յունաց Այրղոռղոռ եկեղեցին թաղուած կայ Վրաց վերջին Սողոմոն թագաւորը։ Շէնքերու հնութեան և նոցա վրայ եղած արձանագրութեանց վրայօք դաղափար տալու համար՝ Մինչնաբերդին Յունագիր դրեթէ 1200 տարուան սոյն արձանագիրը կը յիշատակեմ ասոնք, «յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ինքնակալ կայսր Փլաբիոս Յուստինոս Ալամանական, Գթական, Փրանկական, Գերմանական, Ատիկեան, Ալանական, Վանդալական, Աֆրիկեան,

բարեպաշտ, բարեբաղդ, վառաւոր, յաղթող, յաղթանակող մշտասերբաստ օգոստոս նորոգեաց պատուասիրութեամբ զհրապարակական շինուածս քաղաքիս . . . . (1)

Տրապիզոնի այժմու առաջնորդական վիճակն ունի 35000 Հայ, 62 եկեղեցի, 53 դպրոց և երկու հասութաւոր չէն վանք։ Պոնտական Հայք ուսման և վաճառականութեան մէջ հետզհետէ յառաջանալու վրայ են։ Վիճակայինք ընդհանրապէս դրպրոցնին կը հոգան տարեկան հանգանակութեամբ և շաբաթական թոշակներով։ Կան և շատ ընկերութիւններ, որք յատուկ դրպրմաղլուխ ունենալով դպրոցի ապագայ կը պատրաստեն և կ՚ապահովեն։ Ինձ վիճակուած Օսմանեան Հայաստանի բաժնին մէջ այս գաւառէն աւելի յառաջադէմ չկայ։ Միայն թէ գիւղական տներ իրարմէ հեռի ըստ երկրին սովորութեան, իւրաքանչիւր անձի կալուածին մէջ առանձնակի կառուցուած լինելուն՝ եթէ ոչ անկարելի, դեթ ամենադժուարին եղած է գեղջուկ մանկտւոյն ի դպրոց երթևեկութիւնը, մանաւանդ ի ձմերան։

(1) Տես եւ ի Պատմ. Պոնտոսի ի Վենետիկ։

Տրապիզոնի առաջնորդութեան կցուած է և Կիւմիւշխանէ, Բէլբիթ և Կոհանս։ Ի Կիւմիւշխանէ Հայք ունին հոյակապ նորաշէն եկեղեցի և վանք չքեղ։ Իսկ միւս երկու գաւառներն եկեղեցիներու աւերակներէ զատ՝ ուրիշ բան չունին, Հայ բնակիչներ կանուխ արդէն ազգ ու կրօն թողլով՝ տիրող ազգին կրօնն ու լեզուն առած են։ Իսկ Տրապիզոնի ծովեզերեայ Սիւրմէնէ գաւառէն դէպ վեր է մեր հին Խաղտեաց աշխարհը, ուր են Համշէն և Արդուին, Արտանուչ և Արտահան քաղաքները։ Համշէն՝ որ լեռնոտ երկիր է, ունի մեծամեծ անտառներ, շատ տեսակ ծառերով և բոյսերով Հայկական անուամբ։ Ունի Համշէն նաւահանգիստ Արտաշին անուն, և Հայանուն գիւղօրէք, որոց բնիկք հայերէնախօս մահմէտականք են։ Կայ աստ Խ[illegible] անուն ուխտատեղի մը, ուր երբեմն մեծ զանգակ մը գտնուած է, ուր և կայ մեծ գերեզմանմը [illegible] անուն, իբր թէ այս արջ վանքին հաւատարմաբար ծառայեր ու մեռեր է, Հայ մահմէտականք ցարդ իսկ յուխտ կը գնան։ Այս գաւառը յառաջուց Տարբուր կ՚ըսուէր, յետոյ Համամ Հայ իշխանը Համշէն բերդաւանը յիւր անուն շինելովը, գաւառն ալ Համշէն ըսուած է։ Իսկ Արդուին և Արտահան և Աճա-

ԱԿԻ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

րիթին մինչև ի Կարս և Ախալցխա, որք և մերոյն Խաղտեաց մասն են, իրենց Հայկական և Վրական աւերակներէն զատ՝ ուրիշ բան չունին, տեղացիք ևս կրօններն և աղդութիւնները կորուսանելով՝ այժմ մահմէտական Լազ կամ Մկռէլ են։

Պոնտոսի և Խաղտեաց ժողովրդեան կարծես ճակատագիրն է եղած կրօն ու աղդ փոփոխելը։ Հայոց տիրապետութենէ յետոյ, Հռոմայեցիք, Պարսիկք, Բիւզանդեան Հոռոմք և Թիւրքք հետզհետէ տիրեցին, և միշտ տիրող աղդին լեզուն մանաւանդ կրօնը մեծ դեր խաղացած են։ Այս երկու երկիրներու մէջ այսօր կան 25000 հայախօս մահմետական, 130000 յունախօս մահմետական, աղդաւ Լազ և Թիւրք։ Այս երկու մեծ նահանգներուն մէջ չկայ տեղ մը ուր աշտարակ կամ բերդ մը, կամ ոևէ հին շէնք մը չը դտնուի, Հայկական, Լատինական, Յունական, Ճենովիզական։ Միայն Համշէն ունի 4 հանդավանք, 38 հանդեկեղեցի և 70 գերեզմաններ։ Իսկ Սիւրմէնէ 3 հանդավանք, 36 հանդեկեղեցի և 61 գերեզման։ Նոյնպէս Թէյբիթ 1 հանդավանք, 94 հանդեկեղեցի և 102 գերեզմաններ ունի։ Իսկ միւս դաւառներն որովհետև կանուխէն թողած են

կրօններն, հետևաբար քրիստոնէական շէնքեր շատ քիչ կան, բայց գիւղերէն անուանք և գերեզմաններու մականուանք դեռ հայկական են։

Այս առթիւ հարկ կը համարիմ կանուխէն ծանուցանել, որ Պոնտացի և Հայաստանցի գեղջուկները փոքր եկեղեցիներու խաչաձև կ'ըսեն, իսկ փլած եկեղեցիներու և վանքերու հանգեկեղեցի և հանգավանք։ Իբր թէ հանգուցեալ եկեղեցի և վանք (1)։ Ուստի ուշադիր լինելու է, Տեարք և Տիկնայք, որ երբ ո՛ր դաւառի մէջ այսչափ թուով հանդեկեղեցի և կամ գերեզման կը յիշատակեմ, գրեթէ կրկին թուով մնացող գիւղեր մերձաւոր ժամանակներու մէջ կամ գաղթած, կամ մանաւանդ մահմետականացած հասկանալու է, որպէս զի հարկ չմնայ ինձ իւրաքանչիւր գիւղն իւր հայկական անունովն կամ ուրիշ յատկանիշով յիշելով՝ երկարաբանել։ Այս հանգած վանքերու և եկեղեցիներու և գերեզմաններ-

(1) Հանգած վանքերու եւ եկեղեցիներու եւ գերեզմաններու տեղն ունէ նշանովն ու աւանդութեամբ թէ որ գիւղին մէջ կամ մօտն են թէեւ ուրոյն ունիմ, զորս քաղած եմ հանդերձ չնորհակալութեամբ հաւատարիմ քահանայներէ եւ տիրացուներէ եւ ուրիշ անձերէ, բայց զայնս պիտի հրատարակեմ, երբ Աստուն օգնէ ինձ։

րու մէջ կան խաչքարեր և խոչքարեր։ Խաչ-
քարերն երկար կոթողանման քարեր են, ուր
արձանագրեր կան և ննջեցեալին գլխոյն ի վե-
րև կը կանգնին. այսպիսի մեծ և փառաւոր
խաչաքարեր երբեմն իբր սահմանագլուխ
դաւառին կամ արտի մը դրուած են։ Կ. Պոլ-
սոյ մահմեդականաց քար տնկելով սովորու-
թիւնը հայկականին նմանակ է։ Այս տեսակ
խաչաքարերէն երկու մարդաչափ բարձր եր-
կու ահագին մեծ խաչքարեր կան ի Դերջան
բարձր լեռան վրայ, զոր մօտակայ գիւղացիք
հանդերձ այլազգիք Ռոզան Խաչ կ'ըսեն։ Թէ-
և շատ հին ու նոր արձանագրութիւններ
ընթերցած եմ, բայց սա սրտիս դպած լիներ-
լուն՝ հարկ կը համարիմ այժմ յիշատակել
զայն, և ձեր սրտին դպցընել։ «Ցիսուն ամ
ողջունեցի զարև մարդոյ, իսկ արդ ողջու-
նեմ զարևն Աստուծոյ»։ (1) Աստուծոյ արև
տալ և զայն ողջունելն ի հնումն արևապաշտ և
զարդիս արևասէր հայուն մտքէն միայն կա-
րելի է արտադրիլ։ Իսկ խոչքարերն են, քա-
րէ խոյեր կամ դառնուկներ, որոց վրայ ար-
ձանագիրք կան, որոց տակ կը թաղուին մա-
նուկներ։ Այդ քարէ դառնուկներ շատ ան-

(1) Ի Ղուղիչան ի Փէրկիտ գիւղ յամի ՅՁ։

գամ կը ծաղկազարդուին հանգուցելոյն գեր-
դաստանէն։ Ահա մի տապանագիր, «ես դառ-
նուկ Մնձուրեան, հանգչիմ ի ծոց Փրկչեան»։ (1)
Կան նաև հասարակ շիրիմներ մերիններուն
նման, որոց վրայ հանգուցելոյն արհեստը
դրուագուած է, եթէ կօշկակար է, կօշիկ,
և եթէ դերձակ՝ մկրատ և այլն։ Հարուստ
անձեր իրենց հօր և կամ մօր գերեզմանը,
որ խաչքարերով զարդարած են, գմբեթա-
ւոր կը ծածկեն, այս սովորութիւնը յաճախ
է ի Ռուսահայս։

Այժմ ժամանակ է, աղնիւ Տեարք և Տիկ-
նայք, ի Բարձր Հայս մտնելու, երկիր արեան
և արտասուաց. պիտի չխօսիմ Զեզ, թէ պա-
տերազմին երեսէն գեղջուկ Հայք որքա՛ն վնա-
սեցան։ Այն 30,000 Հայերէն, որոց վրայօք
այն ժամանակ օտար և ազգային լրագիրներ
գովեստ հրատարակեցին, շատեր այսօր հաշմ
ու ցաւագար են։ Ռազմական մթերքի և թըն-
դանօթի փոխադրութեան առեն չարաչար
գործածուելով բռնի և ձրի դրեթէ, վրայ
տալով միանգամայն ոչ թէ միայն սայլ ու
ամոլ եզ, ձի և ջորի, այլև կենդանապահիկ

(1) Ի Գղի մերձ ի Սագաձոր գիւղ, կոտրուած
խոչքար։

պարէնն անդամ։ Մինչ ժողովուրդն այսպէս, մերային իշխան աղաներն երկրին մէջ հովիւ առաջնորդ չլինելէն օգտուած՝ ի հաճոյս այս կամ այն պետական բարձրաստիճան անձերու կամ յանուն անձնական շահու դիտած էին իրաց դառնաղէտ վիճակը։ Այսպէս երկրագործ Հայուն սերմցու ցորէնն իսկ սպառելով՝ Հայոց աղջիկներն ու հարսեր և աղամարդեր ստիպուած էին Ցրաղիզոնէն լաղուտ (միսիր պուղտա) շալակելով բոպիկ և դրեթէ մերկ քալելով՝ ի հայրենիս բերել և ուտել։ Իսկ այս երթևեկութեան մէջ ինչե՞ր չեն պատահիր, հարկ չկան յիշատակելու, մանաւանդ երբ լեռներն ու ձորեր լցուած են Թիւրքին վախճատական զինուորներովը։ Քա՜ւ, ես չեմ կամիր պետութիւնը բամբասել, այլ մեր մեղքը կուզեմ յայտնել և ազգային իշխանութեանը, որ այսպիսի ժողովուրդ մը անտերունչ թողուցած էր։

Բաբերդ և Սպեր, այս երկու գաւառներու Հայեր չարաչար կը հարստահարուին մոլեռանդ մահմետականներէն, որք թէև տիպարաւ Հայ են, բայց ոչ բնաւ սրտով։ Օրինակ. Բալախոռ գիւղին Թրքերն երաժտութեան ատեն Հայոց դերեզմաններէն նոր հանդած դիակներու գլուխներ կտրելով՝

ձորին ջուրը կը ձգեն, որպէսզի երկինք անձրևէ ըստ մոլլային բանի։ Խե՜ղճ Հայեր, կենդանութեան ատեն չարչարուելէ զատ՝ գերեզմանի մէջ ալ հանգիստ պիտի չունենաք, և այս յանուն Խաչի, նոյն իսկ խաչի փառաւորագոյն դարուս մէջ խաչապաշտ հզօր կայսրերու և թագաւորներու աչքին առջև։ Բաբերդ ունի Վահանչէն և ՎարդՀան քաղաքներու աւերակներ. իսկ բերդն էր հռչակաւոր ատեն մը, Բասկևիչի յարձակմանէն յառաջ։ Բերդին աւերակաց նշանագրերն ու եկեղեցւոյ օրմերուն պատկերներն անհետանալու վրայ են։

Բաբերդի և Դերջանի մէջ կայ Շողանայ վանքի հռչակաւոր աւերակը, աղո՛ր գործ հայկական ճարտարապետութեան։ Բաբերդ և Սպեր ունին 45 եկեղեցի։ Իսկ միայն Բաբերդ ունի 13 հանդավանք, 51 հանդեկեղեցի, և 68 դերեզմաննոց։ Իսկ Սպեր 60 հանդեկեղեցի և 80 դերեզմաննոց։ Այս երկու առաջնորդական վիճակներ ունին առանձին մի մի շէն վանքեր, և ի տեղիս տեղիս շատ ուխտատեղիներ։ Բաբերդէն և Սպերէն կը խոխոջէ ճառուոխ ադենաբուղիս գետը. այս գետին վրայօք տեղացիք անտառներու ատաղձներ մէկմէկու կապելով և վրան նստելով և խաչ

կանչելով այս կամ այն տեղեր կը փոխադրեն զայնս և մինչև ի Սև ծով։ Բաբերդի Բէստէ-սիկ Հայ գիւղի գերեզմանատան մէջ կայ մի ահագին վիմեայ տապան. կը պատմուի թէ վիմեայ շիրմին համեմատ երկայնահասակ և յաղթանդամ Հայ մը Հայաստանի փրկութեանը համար Մասիսի Հրէշին հետ մրցեր է։ Իսկ Օձտեղ գիւղին մօտ կան քարօձեր. կը պատմուի թէ ճաշու աւետարանի ընթերցման ատեն՝ վիշապը կը յարձակի օձերով ի ներքս ի տաճարն, իսկ տէրտէրն Աւետարանով կը ջախջախէ։ Քարացած վիշապին պորտին տեղը լիաքար կըսուի, և չքաղող տղեկներ անտի կ'անցընեն, որ բժշկուին։ Իսկ կայ մէկ գեղանափոր ուղի, Նիւ գիւղէն մինչև ի Խաղտիք Թիւրք գիւղ, 1½ ժամ տեւող, ուր հանգեկեղեցի և խաչ քարեր կան։ Խալաէն Հայ սեպուհ պատանին գաղտկեկ կը հաղորդակցի եղեր ի Նիւ Յոյն իշխանի դստեր հետ, զոր հուսկ իրեն նու (հարս) առնելով հարսին ամարանոց սոյն գիւղն ալ սոյն անունը կ'առնու։

Սպերու կիս է Կիսկիմ և Թորթում գաւառներ։ Կիսկիմի Խոտարջուր Հայ Գաթոլիկ գիւղն իւր մօտակայ գիւղերուն հանդերձ երեւելի է, իսկ ի Թորթում ունիմք երկու գիւղ միայն։

Թորթումցիք 1750 ին ա՛լ ձանձրանալով յանուն կրօնի զրկանքէ և չարչարանքէ, առհասարակ մահմէտականացած են, որոց փառաւոր եկեղեցիք և գերեզմանք դեռ հաստատ կան։ Ունին սոքա 120 հանդեկեղեցի, 140 գերեզմանոց և 10 հանգամանք։

Դերջան ունի հին շէնքեր. Բէգէռիչի (Բաղառիչ) բերդն, որ դաշտին մէջ զուտ ապառաժ ահագին քար մի է, տեսոյ արժանի է։ Այդ բլրանման քարը փորուած և ծակուած է. Աստուած իմ, որպիսի՛ երկար տաժանելի աշխատութեամբ. մարմարաշէն սանդուխի մը 200 ի չափ աստիճաններէն վար իջնելով՝ անդնդէն ջուր կը հանուի և վեր կը բերուի եղեր. այս բաւ չէ, նաև 3 մեծ աւազաններ ևս փորուած են ժայռին ամէն մէկ կողմը, և յատուկ փորածոյ խողովակներով իրարու ադուցած։ Բերդի ժայռին վերայ բևեռադրեր ալ կան, դեռ մինչև ցարդ անընթեռնելի, որոց և պատճէնն ընդունած է եղեր տոքթէօր Մորթման, ինչպէս ստուգեցի։ Այս գաւառի մէջ Խրոմաձորի եկեղեցին հռչակաւոր է, որ չորս կողմէն խորան առ խորան բարձրացած և ամէն կերպ միրդերով և անասուններով զրուագուած և երկաթագիր արձանագրերով դեռ կայ հաս-

տատ, և միայն գմբէթն է անկած։

Դերջան ունի 2 շէն վանք և 31 եկեղեցի։ Ունի և 22 հանգավանք, 18 ուխտատեղի, 74 հանդեկեղեցի և 60 գերեզմաննոց։

Մամախաթուն գիւղին մօտը կայ մատրանման գմբէթաւոր շրջանակաձև մեծ շէնք մի, որոյ շրջանակն անկիւնաւոր է, իւրաքանչիւր անկիւն միմեանց կից շիրիմք կան, և ի միջև մին կը բարձրանայ վեղարանման գմբէթաւ։ Շէնքն թէև Հայկական կը պատմուի, բայց Թրքաց սեփական է։ Իսկ Սբ. Բոլսը Ս. Թորոս վանքի մօտ կայ Սուրբն քաղաքի մը աւերակները, ուր կան դեռ կիսափուլ ութ եկեղեցիներ և ուրիշ աւերակներ։

Կից է Դերջանայ Երիզա, որ տուրևառի և արուեստի կողմէ յառաջացած է բաւական։ Սա իրաւամբ Հայոց սրբավայր երկիրը կը համարուի, երբեմն իւր մեհենական և ապա իւր քրիստոնէական պայծառութեամբը։ Իւր դաշտին շուրջն երբեմն բարձրացած էին 24 վանքեր, որոց միայն ութը կան այժմ, իսկ միւսներն աւերակ։ (1) Ունի և 25 եկեղեցի,

(1) Ի թիլ աւան կը հանդչի Սրիատակէս, իսկ ի Խախ կան Պապայ արքունեաց փլատակները սրբատաշ քարերով, ուր եւ թիւնաւորեցաւ Մեծն Ներսէս Պարթեւ Հայրապետ։

12 հանգավանք, 93 հանդեկեղեցի, և 108 գերեզմաննոց։ Իսկ Կամախ ունի բերդ կէս մը արուեստաշէն և կէս բնական, որ ընդերկրեայ ճանապարհ ունի մինչև մերձակայ առուն։ Այս ամենամեծ բերդը մինչև 4000 տուն կարող է պարունակել, մեր նախնիքներէն շինուած, որոյ վեց քարաշէն եկեղեցիքը դեռ կանգուն կան. քիչ մը հեռուն կայ կապան, այսինքն անձուկ ճանապարհ, քարակերին մէջէն փորուած, մինչ դի անցորդաց վերայ լերին ապառաժը կը հովանաւորի։ Այս կապանին ծայրն ապառաժին վերայ իբր թէ Ալին նստած լինելուն՝ նստուկին դիրքն այնպէս խոռոչացած՝ մնացած կը քարողուի մահմէտականներէ, մինչ Հայերէն Տրդատայ համար կ'աւանդուի։ Այս տեղին մօտն ահագին խոշոր փայտ մը մխուած կայ ժայռին մէջ բաւական խոր, իբր թէ ի ցոյց դերբնային կորովութեան Ալիէն վարսուած կամ Տրդատէն. քիչ մը անդին կայ աշտարակ մի հին, որմէն հեռի կայ վիմի վերայ Ալեայ կամ Տրդատայ ձիուն պայտառներ (նալ) սովորական պայտառի կրկին մեծութեամբ. հոս է փայտաշէն կամուրջը, ուստի Եփրատ կը հոսի։ Դեռէն անդին երեք ԲԷՐԴԵՐ կան, ՇԵՀԻՐԼԷՐ ԴԵՂԻ անուն, որոց մէջ շատ մը քա-

ռաջէն դամբանարանը կան, բայց երրորդին մէջ է ՍԷ ԷՕՆ ԷՍԹԷՆԸՆը կոչուած թադաւորի մի կանաչ լաթերով ծածկուած սեւցած մարմինը։ Սոյն դամբանարանը հայաշէն կ'աւանդուի։ Կամախայ մօտը ԳԷՐԷ ԷՆԷՆԷ կոչուած աւերակ տեղը յառաջուց կան եղեր 40 եկեղեցիք և բնակութիւն մեծ։ Այս գաւառի Թորդան գիւղի վանքի մէջ կան դամբանարանք յանուն Լուսաւորչի, Վրթանէսի Բուսական, Աշխէն տիկնոջ և Խոսրովիդխտոյ և Տրդատայ թագաւորի։ Բագառիչ գիւղի վանքի մէջ կայ պղնձի խաչ, զոր Թադէոս առաքեալ Քրիստոսի իւր աշակերտաց ոտքը լուացած կոնքի նիւթէն խաչ շինելով հոս բերած կը պատմուի, այս վանքի պարտէզէն կ'ելնէ խաչանձոր անուն համով պտուղը։

Կամախ ունի 5 շէն վանք և 11 եկեղեցի. և 6 հանգավանք, 108 հանգեկեղեցի, և 63 դերեզմաններոց։ Երբեմն Կամախ մեր Արշակունի թագաւորաց հանգստեան տեղին էր։

Քուրիչայ և Կերճանիս Կամախայ հետ միացած են. ունին 7 եկեղեցի, 8 հանգավանք, 150 հանգեկեղեցի, և նոյնչափ դերեթէ դերեզմաններոց։ Կերճանիսի 150 գիւղերէն միայն երկուքը Հայ են։ Կանուխ ժամանակի մէջ բնիկ Հայերը կէս մը գաղթեր և կէսէն աւելին այլազգէն են եղած։ Նոյնպէս Ղուզիջան և Տէրսիմ լեռնոտ և ձորոտ երկիր թէև, բայց յոյժ բերրի են։ Հոս խիստ շատ անձաւներ, հանգած եկեղեցիներ և վանքեր, դերեզմաններ և բերդեր և ուրիշ կիսափուլ շէնքեր կան։ Այս կողմի Զաղա աղնուականներ լսելով թէ Հայք պիտի յաջողին, զի հայկական խնդրոյն հռչակն ի խորս Հայաստանի հասած՝ արձագանգ գտած էր, ուստի խորհրդակցելով զայն ողջունելու հաւանած՝ ինձ հետ փութացան յերկրպագութիւն հայկական արեւուն յուսով ապահովութեան պայազատութեան իւրեանց։ Այլ աւա՜ղ, զի «պլտուկը գլորեր, խուփն է գտեր», առածն ամենաճիշդ կատարուեր էր այս ատեն։ Եւ ահա աշխարհի առջև կը հրատարակուէր, թէ Քիւրտք Քրիստոնէանալու վրայ են...։

Այս երկու գաւառներուն կից է և Քղի, բայց երկիրը լեռնուտ լինելուն՝ դժուար է ապրուստ ճարելը և յաճախ է սովը։ 43 եկեղեցի և 4 վանքեր ունի շէն. կան և 12 հանգավանք, 81 հանգեկեղեցի և 75 դերեզմաններոց։ Քղւոյ և Մշոյ մէջ է Աստղբերդ քարաշէն բերդը, իբր թէ Աստղիկ Հայ թագուհիէ մը շինուած, որոյ վրայօք առասպելք կը

պատմուին։ Մօտ է և խօսնակ Ս. Կիրակոսի վանքը Օրօր գեղակին եզրը, որոյ կամուրջին վրայ սրով նահատակեցաւ Ս. Խաչ եպիսկոպոս, գործակից Մեծին Ներսէսի, որոյ դամբանարանն է ի Հաղստուն գիւղ։ Կից է Քըղուոյ և Կարնոյ դաւառը։

Կարին իւր ընդարձակ հոյակապ եկեղեցիէն և մէկ քանի հնաշէն ֆոֆներէ զատ՝ որը յառաջուց Հայոց եկեղեցի են եղած, յիշատակութեան արժանի բան մը չունի, իւր խաչանիշ պարիսպները և 72 աշտարակները վար առնուած են, միայն արդի պատերազմական ֆլանները համեմատ շինուած մարտկոցներն արժանի են տեսոյ։ Իւր միջնաբերդն անգամ այնքան մեծ բան մը չէ։ Ունի Կարին, 4 վանք, 40 եկեղեցի, նոյնպէս շատ հանգած եկեղեցիներ։ Գրեթէ յիսուն տարի յառաջ Բասկեիչի ատեն Կարապետ եպիսկոպոս ամենամեծ դաղթականութիւն մը հանած է այս կողմերէն։ 90,000 դաղթող ժողովրդէն հաղիւ 25000 ը կենդանի մնալով Ալսլցիայու կողմերը կը հասատատուի։ Դաղթականութեան այս օրինակ զարհուրելի աղէտն այս տարի ևս տեսնուեցաւ մեր Ալաշկերտցւոց վրայ, քանի մը հաղար դաղթողներէն հաղիւ քառորդը կենդանի վերադարձաւ։ Ահա այս կերպով Կարապետ եպիսկոպոս իւր անհեռատես քաղաքականութեամբ ըն աղդին երեսէն ընկած, Ներսէս կաթողիկոսէն արհամարհուած կը մեռանի և կը թաղուի Ալսլցիա, որոյ դերեզմանին վրայ դեռ արձանագրութիւն մ՚անգամ չկայ, և վայելո՛ւչ։ Կից է և Կարնոյ Բասենն, ուր կայ և վանք մը, ուր թաղուած է Գրիգոր Մագիստրոս։ Բասենի Բլնի բերդն, որ այժմ Հասանղալէ կը կոչուի, նշանակութեան արժանի է իբր հայկական ձեռակերտ, ուր և հայկական արձանագիր կայ։ Մուրց գետակ ասուի յերասխ կը հոսի։ Մօտ է Բասենի Ալաշկերտ և Պայազիտ, ուր կայ լուսաւորչաշէն հոյակապ և հսկայ մէկ վանք, Իշ-էլի-ե անուն։ Պայազիտի հին բերդը խարխլած է, իսկ նորն արդի պատերազմէն շատ վնասուած։ Հինը կը ռազաշտական դարէն մնացած կ՚երևի իւր այլևայլ նշաններովը։ Հոս կը վերջանայ Օսմանեան Բարձր-Հայքը կամ թէ Հայաստանը։

Բ.

Այլազգիք. — Հայախօս մահմէտականք եւ քրդախօս Հայք, Թիւրքք եւ Թիւրքմէնք, Քիւրտք եւ Զազայք, Եէզիտիք եւ Բոշայք, կենցաղ սոցա եւ սովորոյթք այլ եւ այլ. — Կենցաղ Հայոց եւ սովորոյթք հին ու նոր, առանին եւ հարսանեկան եւ այլն. — Վանորայք եւ ուխտաւորութիւն. — Վարդավառ եւ Լուսաւորիչ. — Ռուսական վիճակ Հայոց.— Լազարէֆի, Տէր Ղուկասոֆի եւ Ռուսահայոց ընթացք. — Երկիցս գաղթականութիւն Ալաշկերտցւոց եւ Պայազիտցւոց. — Թիկար խմաստուն եւ իւր առակք. — Վերջաբան։

Այժմ, ազնիւ Տեարք և Տիկնայք, ժամանակ է լսելու Հայաստանի բնակչաց վրայօք. բաց ի Լուսաւորչական, Գաթօլիկ և Բրօթէստան Հայերէ, կան և Հայ-Հռոմ, որոց հաւատոյ դաւանանքը Ցունական եկեղեցւոյ համեմատ լինելուն՝ այսպէս կը կոչուին։ Կան ատուար թուով Ասորիք, և քիչ Ցոյն և Հրէայ։ Այս ազգերէն զատ կան և հայախօս Թիւրքեր և Լազեր, առհասարակ ցրուած մեր Խաղտեաց աշխարհի և Բարձր Հայոց մէկ մասին մէջ։ Ի Համշէն և ի Սիւրմէնէ գաւառս սոքա դեռ հայերէն կը խօսին, ուրիշ լեզու

չգիտնալնուն, որոց և բնական դիւղերուն անուանքը դեռ հայկական են, նոյնպէս իրենց մականուանքը, և որոց եկեղեցիները դեռ կանգուն են և դերեզմանք հաստատուն։ Քրիստոնէական դեռ շատ նշաններ ունին և շատեր մինչև իսկ կը հաղորդուին դաղտ Հայ թափառիկ տէրտէրներէ, որք ժողովարարութեամբ կը շրջագային։ Ամենայն նախանձաւորութեամբ իրենց հին դերեզմանները իբր պապենական ժառանգութիւն, ուր իբր մահմէտական թէև չեն թաղուիր, կը պահպանեն, նոյն իսկ մոլեռանդ մոլլաներու քարոզներու և թելադրութեան հակառակ։ Ունին երկու դլխաւոր ուխտատեղի, ուր միահամուռ քրիստոնեայ Հայոց հետ կը դիմեն և մատաղ կընեն։ Հռչակաւոր է Ասումատ (Աստուծոյ մատ) վանքը յԱխու դիւղ ի Սիւրմէնէ, ուր յուխտ կ'երթան Մայիս 7 ին. նոյնպէս ի Համշէն ի Խալա դիւղ Ս. Նշան, ուր յուխտ կը դնան օդոստոս 17 ին։ Այս մեր հէք ժողովրդեան հարստահարութիւնն հարիւր տարի յառաջ շատ ամենասոսկալի կը պատմեն ծերունիք։ Էլէվիտ (Եղիսվիտ) դիւղի Ս. Վարդանանց տաճարին մէջ առաջնորդ եպիսկոպոսը չարաչար կ'ըսպաննուի, և մէկ օրուան մէջ ասպատակ

զինուորներ և սրիկայ մոլեռանդներ անասելի եղեռներ կը գործեն «ֆրանկերու հետ։ Այս հալածանքը կը ծանրանայ մինչև Բաբերդայ և Սպերու, Դերջանի և Բէլբիթի վրայ, Տէլի Հայթա պէյի մի առեն։ Ահա յիշատակարանի մը աղէկտուր խօսքը, «Իբրև լուաւ զայս ամենայն Գրիգոր եպիսկոպոս Շողանայ վանուցս, և թէ մեռաւ Հայաստան աշխարհ, հեղձամղձուկս ասայ զհոգւոյն, և առ վըշտին անդէն աւանդեայ զհոգին»։ Ո՜հ, խեղճ Հայոց մեռեալ և անթաղ աշխարհին վրայ դու հոգւոյ կ'ըսես, ո՛ զգայունդ վարդապետ, բայց քո վերայ ո՞վ ասէ հոգւոյ։ Ի մի բան, աղնիւ Տեարք և Տիկնայք, չկայ Հայաստան գաւառ մը կամ մինչև իսկ գիւղ մը կամ արտ մը կամ դաշտ մը և առու մը, ուր հայկական յիշատակի մը չի հանդիպիս, քար ըլլայ այն, կամ տեղւոյ անուն, կամ անձի մը և կամ գերդաստանի մը մականուն կամ խաչքար և կամ բերդի մը տխրատեսիլ բեկորներ։ Դեռ ի Թորթում Հայ մամիկներ թէև մահմէտական, կողկողագին կը յիշեն Լուսաւորչի լոյս հաւատքը, և յաճախ վանօրէից լուսաղբիւրէն կը մկրտուին, և կիրակամտի լոյսը կը վառեն ջրաբուղխ քարի մը վերայ առ այն պաշտպան սուրբ, որ իր պա-

պենական տանն ու աշխարհին կը հսկէ։ Մինչ ասդին այս կ'ելլ Հայեր թէև կրօնին կորուսած, բայց ազգային լեզուին դեռ կը պահեն, անդին Հայք լեզուին թէև կորուսած՝ բայց կրօնին պահած են. սոքա են մեր Տուժիկ կամ Տմպըլիկ Հայերը, որք Քրդախօս են և Զազայախօս։ Հակապատկե՛ր արդարև Խաղտեաց և Բարձր-Հայոց ժողովրդեան։ Սոքա որ ցրիւ են ի Տէրսիմ և ի Ղուզիլան և մինչև ի Տիգրանակերտ, ոչ բնաւ հայերէն գիտեն, ոչ գիր ունին և ոչ դպրութիւն, տարիներով քահանայի երես անդամ տեսած չ'ունին. Լուսաւորչի լոյս հաւատքով քրիստոնէութեան մէջ կ'ապրին։ Երկար առեն այս լեռնաբնակ Հայ քիւրտեր յաջողեցան ազատութիւններին պահպանել շրջակայ ցեղերու դէմ, և ղէնքով միշտ գերազանցած են։ Խզուցիք (հիղանցիք) այս մասին հռչակաւոր են եղած։ Բայց աւա՜ղ, սոցա և այս վիճակ վերջին ժամանակներուս մէջ դառնացաւ, վասն զի Օսմանցիք Սուլթան Մէճիտէն ի վեր վարչական դրութիւններին փոխելով յաջողած են բնակակից Քրդերը դրդռելով և օգնելով՝ Հայոց ուժը ջլատել։

Այս տեսակ Հայերէ զատ՝ կը բնակին ի Հայաստան Թիւրքք և Թիւրքմէնք։ Թիւրքքը

կանուխէն մահմէտականացած Հայերու սերունդ են և թուով 300,000 կան, տիպարնին և շատ սովորութիւններին դեռ բոլորովին Հայկական են. իսկ Թիւրքմէնք Թաթարաց ի Հայաստան յարձակման ատենէն մնացած Թաթարներու սերունդ են, որոց տիպարն և սովորոյթք առ այս կը վկայեն. թուով են 20,000։

Իսկ Քիւրդք հանրածանօթ են արդէն, որոց մեծ մասը հին Մար ազգի սերունդ կը համարուի, իսկ միւս մասը Հայկական. ըստ ցեղից ցեղից կը կոչուին Մանըբցիք, Մանդըկցիք, Սասնցիք, Ռոշկանցիք, Սըլիվանցիք, Սինանցիք, Մըմըբցիք, Սիբէկցիք, Հադարցիք, Պաբլցիք Պանըբցիք, Բեսեան և այլն. այսպիսի անուններ Հայկական հին նախարարութիւններն ի յուշ կ'ածեն մեզ։ Քրդերու սովորութեանց և կենցաղին վրայ շատ խօսուած լինելուն՝ հոս վերստին յիշելն աւելորդ է. սոքա ևս չունին դիր և դպրութիւն, և առաւել հետևող են Մէհմէտի։ Սոքա ևս թուով 200,000 են։ Իսկ Զազայք նոյնպէս յատուկ լեզու ունին Քրդէն զատ, և թուով դրեթէ կը հաւասարին նոցա։ Սոքա բովանդակ Տէրսիմը կամ մեր հին Մոփաց աշխարհը ցրուի դրաւած են. ոչինչ տարբերութիւն ունին Հայկական տիպարէն, բարք և սովորոյթք դրեթէ միևնոյն. թէև ի կրօնս Ալեայ կը հետևին, բայց Քրդերուն նման ոչ մոլեռ ունին և ոչ չէիս, այլ իրենց մէջիքն է իրենց կրօնական և քաղաքական նահապետը։ Թափառիկ կը շրջին ցեղ ցեղ և հովիւ են ընդհանրապէս, ի սկզբանէ ի վեր միշտ ապստամբ. քրիստոնէական նշաններէն սովորականներն արդէն ունին Քրդաց պէս. Հայոց հետ յուխտ կը դնան, և մատաղ կ'անեն, կիրակամուտքի Լուսաւորչի լոյսը կը վառեն, վարդապետ ու տէրտէր կը պատուեն, պտղի կը շնորհեն, հեռուէն խաչքար մը կամ եկեղեցւոյ և վանքի մը աւերակ երբ տեսնեն, ծունր կը դնեն, և այլ սոյն օրինակ սովորոյթք ունին։ Սոքա ևս ժամանակաւ Պարսիկ տիրապետութեան ատեն Պարսիկ դաղթականաց մէջ Հայ խառնուրդէ մը սերեալ կը համարուին։

Եէզիտիք ևս ցրիւ կան, անդիր և անդէտ. ըստ ցեղից կը կոչուին Հավադցի, Ճադուանցի, Աբբկան, Նախիպան և այլն։ Ոչ կը մըկըրտուին, և ոչ կը թլփատուին։ Սատանան սկիզբն չարի դաւանելնէն՝ Մանիքեցւոց աղանդի հետևողներէն մնացորդ կը կարծուին։ Ալաշկերտի կողմը կ'երդնուն այս անունով՝ Սեյդէ, որ սատանային մայրն է եղեր. բայց

ինչպէս սատանայի անուամբ նոյնպէս և Քրիստոսի անուամբ ալ կ'երդնուն ըսելով. «Ե Իսայէ Նասրանէ»։ Ունին և օրհնութիւն բաժակի, զոր յանուն Յիսուսի և ի սէր կը խմեն, յատուկ ջանալով որ օրհնած գինիէն կաթիլ չվաթի։ Ոչ պահք կը պահեն և ոչ կ'աղօթեն, որովհետև իրենց շէնք հոգին (առաջնորդ) ի դիմաց ամենուն կ'աղօթէ եղեր։ Արևուն ծագելէն քիչ յառաջ յարևելս կը դառնան՝ երկու բթամատներին խաչաձև իրարու վրայ դրած. երբ արևուն նշոյլները մատերունն վրայ կ'սփռին, իսկոյն կը համբուրեն. այս է կրօնական աղօթքին և բոլոր արարողութիւններին։ Ամէն մէկ օպա կամ օճախ ունի մէկ ամուսնացեալ շէխ, որ սևափաթեթ ունի ի գլուխն ու խոշոր վերարկու։ Կը պատմուի թէ բաժակի օրհնութիւն մատուցուած ատեն՝ հաց ալ կը դնեն եղեր յաճախ, և բաց գլխով կը վայելեն։ Քրիստոնէից հետ բարեկամութեամբ են, ըստ պատեհին՝ եկեղեցի և վանք կ'երթան, կանդեղներուն իւղէն կ'օծուին, իսկ ընդհակառակը սաստիկ կ'ատեն Մահմէտականները։ Եւ Տաճկի բոլոր անուններն ալ կը կրեն բաց ի Մուհամմէտ անունէն։ Ամուսնութեան մէջ միակին են, և ամէն դարշելի մեղքերէ կ'զգուշանան, բայց

ամենևին մեղք չեն համարիր մարդասպանութիւնը, անցորդները կողոպտելը, գողնալը։ Ահա այսպիսի սկզբունքի տէր աղգերու և ցեղերու մէջ մեր ողորմելի աղգը հակառակ սկզբունք ունենալով այսինքն գողութիւն և սպանութիւն չ'ընել, մէկն եթէ երեսին ապտակ մի զարնելու լինի, միւսը դարձուցանել, կ'ապրի։ Այս նկատմամբ է որ ես ևս տարբեր համոզում ունեցած եմ Աւետարանի քարոզութեան եղանակին վրայ, վասն զի լեռնական ժողովրդեան մի ձեռուքները բարոյապէս կապելը, երբ միւսներըն արձակ ու ազատ ձգուած են, արդարութեան դէմ ոճի՛ր է։

Եէզիտիք առաւել Ասորւոցմէ մնացած խառն սերունդ կը համարուին. նոյն իսկ Հայոց մէջ ևս կային ժամանակաւ սոյնպիսիք, «Եէզիդի» անուամբ, որք և Շնորհալիի ատեն քրիստոնէացան։

Կան և ցրիւ ի Հայաստան Բոշայք. սոքա տեսակ տեսակ անուններ ունին Լօրիկ, Մըսրըպ, Գնչու, Զինկեանէ և այլն։ Սոքա միշտ կը թափառին, և կաղմութիւններն ի սկզբան խառն ամէն աղգէ է. բայց թէ ինչ աղգէ կամ տեղէ մեկնած են, նոյն տեղական կամ աղգային լեզուն ա՛լ բնաւ չեն խօսիր, այլ

անմիջապէս մի լեզու կը հնարեն, որով կը խօսին իրարու մէջ. այնպէս որ ժամանակ անցանելէ յետոյ, որ ազգի գիւղի մէջ պատահի դերդաստանի մը հաստատուն բնակութեան պէտքը, հոն կը բնակի. և տեղացւոց ազգայնութիւնն ու կրօն կ'առնու. վասն զի երկար ատենուան շրջանի մը մէջ ա՛լ անծանօթ իրեն կը մնայ իւր բուն ազգին կրօնն ու լեզուն։ Թէև տեղ տեղ բոշայք մերոնց հետ ի պատեհին քրիստոնէաբար կը վարուին, մինչ զի կը մկրտուին, կը հաղորդուին, և կը խոստովանուին, պտղի կը վճարեն, յուխտ կը գնան մեր Կէսկէսներուն նման, բայց այսքանը բաւական չեն։ Սոքա շատ տեղ մեռելին չեն թաղեր, այլ կ'այրեն։ Ազգերու կազմութիւնը կ'երևի թէ սոյն դրական կենցաղով հաստատուած է աշխարհիս մէջ։

Այսքանս Ազնիւ Տէրք և Տիկնայք, մեր Հայաստան աշխարհի մէջ բնակող ազգերու մասին բաւական համարելով խօսիմք Հայոց ներքին կենաց վրայօք։ Հայք ունին ընդհանրապէս այն բարոյական վիճակն՝ որ Աւետարանը միայն կարող է տալ մարդկութեան, հետևաբար անհամեմատ բարձր են քան զամենայն այլազգիս Հայաստան աշխարհի։ Գերդաստանական նահապետութիւնը

դեռ կատարեալ կայ մանաւանդ ի գիւղօրէս, որու օգտակարութիւնն անհո՛ւն է գեղջկային կենաց. այս կերպով աշխատութեանց բաժանումը և ընտանեկան խաղաղ կենցաղն իրարու հետ կը միանան, և նահապետ պապը կամ մեծ մամն եթէ կենդանի են, կը կառավարեն այն փոքր հասարակապետութիւնը, որ կը բաղկանայ մինչև 150 անդամէ։ Այս սովորութիւնն ի Կիլիկիա իսկ կը պահուի դեռ։ Ցաղորդութիւնը միշտ երիցուն է, նոյնպէս և պատիւը. որ զարմանալին է, առանց խտիր դնելու արուին և իգին մէջ, զի պապէն յետոյ մամն է, հայրէն յետոյ ոչ թէ երէց տղան է, այլ կինն է, մա՛յրն է։

Տնակները դեռնի վերայ միայարկ են, որոց շինութեանը խծուծ երնջնակ, գոնծոծ, ճեռական, մարդակ կը գործածեն, նոյնպէս յ-գով «Ե» կը դնեն՝ եթէ մէկ կողմը ծռելով վանդ ունի. սենեակ մը միայն ունին, որ թէ հիւրանոց է և թէ հանգստոց, որ կը լուսաւորուի օճ-ին լուսովը, որոյ կից է սրահն ու ախոռ. և ձմրան գիշերուան մէջ երբ մերայինք կը հաւաքուին, եղներն ու էշը իրեր հետաքրքիր գլուխնին տնկած՝ կիսաբարձր որմէն նստողները կը դիտեն։ Տաւարին

շնչովը գրեթէ միշտ տաք է տնակը։ Այլուր այն անկիւնը կայ, ուր մեր աղջիկներ և հարսեր լաւաշ (1) կերփեն ամէն առաւօտ և իրիկուն սաջի վրայ։ Վառելիքնին է քակոր (2), որ տաւարին աղբէն կը շինեն ամրան, և բլրանման կը դիզեն ձմրան համար որուն և ոչոց կըսեն։ Իսկ մայրերն ու մամեր կը տնտեսեն զամենայն և առտնին կը կառավարեն զամենեսին։ Ամրան ատեն առհասարակ տանիքի վերայ կը պառկին, և առաւօտուն կանուխ մանն աղօթքան դառնալէ և արշալոյսը ողջունելէ յետոյ ագքաղաղին հետ կը ձայնէ ամենեցուն։ (3)

Մահմէտականութենէ սա սովորութիւնը ներմուծուած է Հայ ընտանեկան կենաց մէջ,

(1) Բարակ ֆէրէ, կամ ճիշդ եկեղեցւոյ մասին նման բարակ հաց, որ շատ տեղ ապուրի ատեն պատառ պատառ դգալի տեղ կը գործածուի։

(2) Տեղ տեղ անուն ունի զատ զատ քշկուր, փթիր, պտտուր եւայլն։

(3) Շատ կանուխէն առաւել ձըմրան ատեն տուներէն ելնելով դրան առջեւ յարեւելս աղօթելով բարի լոյսը ներս առնլու սոյն սովորութիւնը մեր հին արեւապաշտութենէն մնացորդ է անշուշտ։ Քանի տարի յառաջ Երզնկայի առաջնորդ Գրիգորիս վարդապետին փոքրաւորին մայրը Բաբերդի մէջ այս սովորութեան համեմատ դուրսը աղօթած ատեն գայլ մը կը խածնէ եւ կը տանի։ Հաղիւ Վարդեւան տղան կը հասնի եւ կազատէ, եւ գայլը, կը բռնէ ողջ ի ծաղր ամենեցուն։

հարսներուն երեսը քօղով ծածկել մինչ դրեթէ 30 տարի, անշուշտ մահմէտականութեան դարաւոր տիրապետութեան տակ վաւաշոտ և բռնաւոր օտարին համար իբր արդելք ընդունուած է։ Հարսներն անխօսուկ են կեսեր և տագեր, նաև տարեւոր ծանօթին և անծանօթին առջև դրեթէ շատ տարիներ։ Երեխայ մանկիկներու համար շատ տեղ օրոց անդամ չկայ, և եթէ կայ, տղեկը հողին վրայ կը պառկըցընեն, որպէս զի հայրենեաց հողէն ոյժ առնու. ո՛չ, սուրբ մամեր, ո՛չ միայն այդ, այլ նաև հայրենի հողին վրայ մեծնայ, կեանք առնու և կեանք տայ հայրենեաց. զի այդ կտակ մի է, զոր իմաստուն նախնիքդ աւանդած են քեզ, լսեցէք ուրեմն Է. դարու մէջ գրուած ճառընտրի մը խօսքը. «բժժանս համարել առ սէր հայրենի տան զհող երախայի»։ Այս հաւատքին Հայոց վրայ ըրած տպաւորութիւնը 1400 տարի յառաջ Պարսիկ մոգերն ալ խաբած էր, որք Շապուհը դրդռեցին որպէս զի Արշակ Հայոց կալանաւոր թագաւորը՝ իւր ոխերիմ թշնամին փորձէ, և որոյ յաղողութեան կարծես պատմագիրն ևս հաւատալով մը՝ ախորժանօք կը պատմէ. իբր թէ Հայն իւր հողին վրայ ոյժ առնլով կը դործէ, և փորձն Արշակայ վրայ

իրբ թէ կ'յաջողի։ Գաղթական Հայն այդ բժժանքէն դրդուած՝ քանիցս կողկողագին նայեցաւ ի հայրենիս, բայց ո՛չ յաջորդ սերունդը, զի այդ հողին վերայ ոչ պառկեցաւ և ոչ քնացաւ։

Զեմ ուզեր, ո՛ աղնիւ Ցեարք և Տիկնայք, զՁեզ խռովել, թերևս Ձեր հոգին կ'արտասուէ այժմ։ Ես իսկ այժմ խռովեալ եմ, վասն զի այսպիսի յիշատակութիւններ մեր սրտին կը զարնեն. թողլով ուրեմն այսպիսի սրտաճմլիկ յիշատակութիւնները, հետաքրքրականները միայն յիշեմ։ Հայը ծառոտ և ջրոտ տեղուանքը սրբաղանելով նուիրած են երկնային պաշտպանի մը անուան, զոր տեղ տեղ Ռ-ոխ մանուկ կ'անուանեն։ Հոն կիրակմտի գիշերներ լոյս կը վառեն և կ'աղօթեն։ Շատ անգամ ծերուկ պապեր և մամեր գաղտ հոն առանձնանալով կը յափշտակուին . . . բայց գիշերային այն զով սիւքը և տերևոց շշիւնը և ջրին լռիկ խոխոջը և լուսնին ամպոց մէջ թաւալն ո՞վ թէ տեսնէ, չ'զմայլիր կամ չմոգուիր։ Հայոց տարրապաշտութեան ժամանակեայ՝ 3000 տարուան սովորութիւն մի է այս, զոր քրիստոնէական քողին տակ դեռ իւր տեւականութիւնն ունի և աղդեցիկ Հայուն սրտին վրայ։ Նաև ո՞վ կարող է հա-

մարձակիլ այդ ծառերէն ճիւղ մը կամ տերև մը փրցընելու, նա յանկարծակի դերբնական զօրութենէ կը պատժուի։

Իսկ եթէ մէկը հիւանդութենէ բռնուի, Թուխ մանուկի ծառէն լաթի քուրջ մը կախելու է, որպէս զի շուտով բժշկուի։

Ինչպէս քահանայն տաճարէն ներս մեծ դեր ունի և զօրութիւն, նոյնչափ և աւելին իսկ հաւիճ (1) մամն (յաւերժամամ) ունի տաճարէն դուրսը։ Նա իբր փիլիսոփայ և մարդարէ, իրաւարար և դատաւոր իւր պատգամն ունի։ Կ'ըսուի թէ կաղ Գրողն (Սուրբ Կարապետի սատանան) երբ փսփսայ հաւիճ մամուն ականջէն, սա բնաւ չ'սխալիր։ Եւ եթէ սխալի, կաղ Գրողէն է, հաւիճ մամին վրայ ծիծաղելու համար։ Կ'երևի թէ այս աւանդութիւնն ալ կռապաշտական է, զի Հայը ունեցած են ի հնումն Աստուած մը, որ մարդոց գործերը կը գրէ եղեր։ Բայց մեր հաւիճ մամն ուրիշ պաշտօն ալ ունի, հրաշագործութեա՞ն. վասն զի եթէ ոչխար կորսուի, հուսկ ուշ ատեն հովիւն իւր շունչ հաւիճ մամին քով կ'առնու, որ շուտով իւր դայլկապոց կ'առնու, այսինքն փայտ մը և

(1) Զեյթինցիք գէգէ-ին հաւիճ կ'ըսեն։

չուան, զորս աղօթելով իրարու կը կապէ։ Այս միջոցին այն կողմի գայլերուն բերանք եթէ բաց են, բաց կը մնան, եթէ գոց են, գոց, մինչև գայլկապոցը քակուի։ Եթէ բնաւ չգտնուի ոչխարը կամ պատառուած լինի, հաւիճ մանն ա՛լ կը բամբասուի, թէ աղօթքը լաւ չէ արտասաներ, կամ թէ ուրիշին ուսուցած լինելուն՝ զօրութիւնն իրմէն փախեր է, այսինքն կաղ Գրողը։ Մէկուն թէ ձին կամ ջորին ցաւ առնու, տանելու է դերեզմաննոցը, որուն շուրջն եօթն անգամ դառնալու է։ Ցղի կին մը դիւրաւ յղանալու համար կամ թուխ մանուկի մը և կամ եկեղեցնակի մը ծառին խոռոչէն սխմուելով անցնելու է։

Հարսնիքը գովելով և ողջոյով կ՚սկսի ուրբաթ իրկուընէ մանաւանդ ի Կիլիկեան Հայս։ Իրաքանչիւր հրաւիրեալ տանելու է փեսին ի տուն ման մը կերակուր և պտուկ մը գինի։ Հալաւին օրհնէքի ատեն փեսայն թագաւոր կը դառնայ, երբ ժամուն սաղաւարդը գլուխը և շուրջառ կռնակը կը դրուի, և սուրը մէջքէն կը կախուի, (1) և փէսաւէրը տանիքին վրայ կարգաւ կը նստին, և

(1) Շատ անգամ քահանայի վերարկուն վրան կը ձգուի եւ գլխարկը կը դրուի։

բերուած կերակուրները անխտիր ամենուն կը բաժնուին, և կը շարունակուի հանդէսը։ Պսակի առաւօտուն փեսայն ի ձի նստելով և հարսն ի ջորի, յեկեղեցի կը դնան։ Վերադարձի ատեն ի ճանապարհի կը ցանուին մանր դրամներ կամ հիւլիւներ. երբ հարսը տանը դրան առջև կը հասնի, կիսովին շերտած նուռ մը ուժգին նետելով (1) դրան կը զարնէ. կեսուրէն դռնակը կը բացուի, հարսը փեսին հետ թէև ներս կը մտնէ, բայց դրան առջև մեծ աղմուկ կայ, վասն զի փըշրուած նուռին հատերէն դոնէ մին վայելելու համար պզտ պատանիք կը կռուին, որպէս զի ամուսնութեան այն ցանկալի օրին բարո՛վ հասնին։ Մինչ այսպէս, մատաղը կը կատարուի, և հարսանեկան հուրը կը վառուի երեկոյին, որոյ շուրջն երիցս ման գալով փեսայն կը ցատկէ և այլն։

Կայ ուրիշ սովորութիւն առաւել ի Բարձր Հայս. առաջին իրկուընէ տիկով գինի բերուիլը կ՚սկսի, երբ այլևայլ դոյնզդոյն պսակներ կը շինուին, որոցմէ ամենէն աղուորը փեսին համար է։ Այս միջոցին սափրիչը կու-

(1) Ի Դ. օնեացիս երեք խնծոր կը նետէ հարսն ի բարու եւեւ։

դայ իբր թէ փեսան ածիլելու, սափրիչն օրհ-
նած դինիով փեսին երեսը կը լուայ. և ահա
նշխուն խաչաձև փայտի մը վրայ տեսակ տե-
սակ աղնիւ մրգեղէններ կը շարեն և ծաղիկ-
ներ կը հիւսեն, այս փայտին «ոտ» կըսեն,
այս ուռցը նախ քաւորը (կնքահայրը) կ'առ-
նու և կը մաղթէ. «Աստուած հաց ու դինի
տայ մեր փեսին» ևայլն. այսպէս բոլոր փե-
սաւէրը կարգաւ կ'առնուն և կը մաղթեն.
յետոյ տէրտէրը սոյն ուռցը աճուրդի կը հա-
նէ ի շահ վանքին։ Ով որ թէ աւելի նուիրէ,
նա կը լինի «ղոչ դուչ», հրամանատար հարսան-
եաց։ Այս միջոցին սափրիչն ածիլելը թէև
կը լմնցընէ, բայց կլորակ պիսակ կը թողու
երեսին վրայ, և մինչ կը տաղերգուի, փեսին
հայրէն ու մայրէն և բոլոր փեսաւէրներէն
ամէն մէկ նուէր առնլուն՝ քիչ քիչ կ'ածիլէ.
երբ փեսայն ա՛լ կ'ածիլուի, կարմիր թաշկի-
նակի մէջ դրուած՝ ծաղկաղարդ խնձոր մը
քաւորը փեսին կը մատուցանէ, զոր կ'առնու
ծունկ չոքելով և ալը համբուրելով, և զոր
ալ ձեռքով բերնին վրայ կը դնէ մինչև հար-
սանեաց չորրորդ օրը. ա՛լ այնուհետև փե-
սայն խօսելու աղատութիւն չունի, այլ իբր
կողմէն փոխանորդաբար հարսանեաց «ղոչ-
դուչն»։ Մի և նոյն ատեն փեսին կողմէն հար-

սընցուին ի տուն ծաղկաղարդ և հինայուած
ոչխար մը կը խրկուի (1), որ թէ աղջկան ա-
ռօրին հարսնութեան նշանն է և թէ առաւ-
ել հարսնութեանը գինն է։ Յաջորդ օրը
ոչխար կը մորթուի, խաղեր կը խաղցուին
երկուսաէք, որոց մէջ նշանաւոր են աշուղ-
ներու մրցումը, ուժեղներու մենամարտը,
գոմէշներու կատաղի ոգորումը։ Այս միջո-
ցին փեսայայուին կողմէն ընծայուած հալա-
ւը հարսին կը հագուցընեն, և քօղը կը ձը-
գեն, որ քաւորէն ընծայուած է (2)։ Հուսկ
հանդիսով եկեղեցի կուգան և կը պսակուին։
Զկնի ժամերգութեան տէրտէրը փեսին կը-
նակը շուրջառ կը ձգէ, և սաղաւարտ ի գլու-
խը կը դնէ և Աւետարան ի գիրկն կուտայ,
զոր հանդիսականք կարգաւ կը համբուրեն։
Ապա ի տուն կը դառնան ճամբան ցորէն ցա-
նելով։

Հոն փեսին մայրն իր մէկ ձեռքովն սկա-
ւառակի վրայ բաղարջ և փոխինդ և միւսովը

---

(1) Հարուստներն աւելի կը խրկեն. սոյն տեսակ ընթեռնում սովորական է ի գիւղօրէս, մարդն անաս-
սուն հետ փոխանակող դարչելի՝ սովորութիւն։

(2) Օժտագինը ընթեռնում ի գիւղականս միշտ
փէսէն առ հարսն է, հակառակ քաղաքացւոց սովո-
րութեանն, որ հարսէն առ փեսայն է։

պտուկ գինի մը առած՝ ուրիշ տարեւոր կընկան մը հետ, որ ահագին պնակ մը բռնած է, ընդ առաջ կ'ելնէ (1), կը պարէ և կը պարեն։ Ապա տանը սեմին առջև հարսին և փեսին համար երկու ոչխար մատաղ կը մորթուի, իսկ տարեւոր կինը պնակն անդէն գետին կը զարնէ (2), և մատաղը կը կատարուի։ Վերջին օրը տէրտէրը գալով խնծորը փեսին բերնէն կ'առնու և ի փոխարէն՝ շուրջառը կռնակն ու սաղաւարտն ի գլուխ կը դնէ, և Ս. Աւետարանն ի գիրկն, և յարեւելս տաղերգ կը զրուցեն այսպէս. «այդն արեւուն տանք բարև. սուրբ Տիրամօր տանք բարև, տայ Թագուհւոյն շատ արև. սուրբ Լուսաւորչայ տանք բարև, տայ Թագաւորին շատ արև»։ Արեւուն սոյն օրինակ ողջունելն, որ շատ յաճախ է, Հայոց արեւապաշտութեան դարերը կը յիշեցընեն մեզ։ Կան և ուրիշ շատ սովորութիւնք մանաւանդ եկեղեցական, բայց

(1) Ի Պարսկահայս եւ ի Սիւնիս սոյն տարեւոր կինը պնակ մը մեղրով ընդ առաջ կելնէ, մատուը հարսին եւ փեսին բերանը կը քսէ. քաւորը թուրը բացած դրան առջեւ կը կենայ, որոյ տակէն փեսաւէրք կ'անցնին։

(2) Ի Սիւնիս տանը դրան սեմին առջեւ երկու պնակ կը դրուի, որոց վրայ հարսն ու փեսայն կոխելով կ'անցնին։

այս ամէնն այժմ հետզհետէ վերնալու վրայ են։

Տեարք և Տիկնայք, քիչ մ'ալ վանքերու վրայ խօսիմ. վանքերն անհուն ծառայութիւն մատուցած են հայրենեաց. հոն է մեր դպրոցն ու դրանոց, հիւրանոցն ու հիւանդանոց. հոն կը փայլի մեր ազգային յատկանիշը, իւր յատուկ ու զանազան գոյներով։ Վանքերու տօնական հանդէսները (բանայիր) քաղաքացին ու գիւղացին, հեռաւորն ու մերձաւոր իրարու հետ կը կապեն։ Այն օր մեր աշուխներ ու մրցողներ իրենց հանճարն ու ոյժ աղատօրէն ի ցոյց կը հանեն. այն օր միայն Հայաստանցին ի տրտմութենէ անխառն իւր զուարթ ուրախութիւնն ազատ կը վայելէ, զի այն օրէն աշխարհ կը պատկառի, զի Փիւրան ու Թիւրք իսկ հոն հանդիսակից են։ Հոգեգալստեան յաջորդ շաբաթ օրը Հայերուն հետ Քրդեր և Զաղաներ գունդ գունդ կը դիմեն ի Սբրբիսը Ս. Թորոս վանք, որ շինուած է Երզնկայի և Դերջանի միջև լեռան մը գագաթը։ Հոն Լուսաւորչի խաչափառ «ԷԷԷ» կը տնկուի, և Հայաստանը կ'օրհնուի անդաստանի արարողութեամբ. երբ մատաղը կը կատարուի, ուխտաւորք իրար հրելով և հրմշտկելով սբ-

ըրխին քով կը ծեծկուին, որ ծայրը երնեն և խաչը պագնեն և հաբարին առնեն։ Հաղարէն հաղիւ մէկը կրնայ այդ բաղդին արժանանալ, վասնզի բարձր լինելուն՝ շուլլուած առեննին վար կ'իյնան, քթերնին կ'արուին, և գլուխնին կը վիրաւորուի և այլն. հոն էլ նոյն օրուան դիշերը, հանդերձ քահանայիւք անդաստան ընելով լալով օրհնեցի Հայաստանը։

Վանքերու տօնական հանդէսներու մէջ ամենէն երևելին է Վարդավառը. չկայ գիւղ մը և քաղաք, որ սոյն օրը զուարթագին չը խայտայ։ Այս օրը գեղջուկ Թիւրքերն ու Քիւրտերը Հայերէն աւելի կը տօնեն մեծահանդէս։ Այսօր Հայք իրարու վրայ ջուր սրսկելով և աղաւնիներ արձկելով Նոյեան դարը կը յիշեցնեն մեզ։ Այսօր Դարդան եղն ի հանդէս կը հանուի, վասնզի մատաղցու երը ծաղիկներով զարդարելով և գոյնզգոյն հինայելով և եղջիւրներուն վրայ մեղրամոմեր վառելով եռևէն և առջևէն տաղ երգելով ի սպանդ կը տարուի (1)։ Կը զարմանամ ոչ թէ

(1) Տեղ տեղ եղին վրայ չուրջառ ալ կը ձգուի եւ քահանայք եւ տիրացուք կղեռաւորուին եւ «որ օրհնիս» շարականը ըսելով առջևէն կերթան։ Մատաղցու եղին կաշին միշտ վանքին է։

այս տօնին հնութեանը և Հայ և այլազգի ժողովրդեան վերայ ըրած ամենախորին տպաւորութեանը վրայ, այլև Լուսաւորչի ունեցած այնքան մեծ ազդեցութեան վրայ, վասընզի չկայ տեղ մը ուր Լուսաւորիչ չ'յիշուի, և կամ յանուն Լուսաւորչի յիշատակ մը չ'լինի. դեռ Արարատ աշխարհը կը հաւատայ, թէ Լուսաւորչի կանդեղը երկնի և երկրի միջև Արագած լերին վրայ կախուած կը վառի. և ցորչափ Լուսաւորչի լոյս հաւատը կայ, պիտի չմարի (1)։ Ո՛վ սուրբ ռամկութիւն։

Բայց հիմակ պիտի ասէք ինձ, աղնիւ Տեարք և Տիկնայք, թէ այսքան չէն ու անշէն վանքեր ու եկեղեցիներ յիշատակեցիր, դպրոցք չկա՞ն. — ո՛չ, պիտի պատասխանեմ, չկա՞ն։ Այս բառիս լաւ ուշադիր եղէք։ Շատ գիւղերու մէջ թէև կան ախոռի պէս շէնքեր իբր դպրոց, բայց հոն շատ քիչ տղայք կը յաճախեն ձմեռ ատեն, իսկ ամրան ո՛չ. թէև մերիններն այլազգի գիւղերուն առջև

(1) Հայք Լուսաւորչի հաւատովն ազգային եկեղեցւոյ կապուած են, աղանդաւորք սոյն ազդեցութիւնը Լուսաւորեալ Հայուն առջև ոչնչացընելու համար Լուսաւորչի վրայ հռչակած են, թէ Հայոց մեհենական գրքերը նա մոլեռանդաբար այրած է, մինչդեռ ժամանակակից պատմիչներէն այդպիսի վկայութիւն չկայ։

դերաղանց են, զի ունին քահանայէ զատ մէկ երկու դրող կարդացող դէրեաց անուամբ, իսկ այլազգ գիւղերու մէջ ո՛չ բնաւ բաց ի Հայէ կամ Դրնոբէ մը։ Մեր եկեղեցւոյ պատարագի և ժամերգի արարողական դրութենէն՝ որ առանձին քահանայով մը կատարել կարելի չէ, ահա սոյն օրինակ արդիւնք յառաջ եկած է յօգուտ ազգի։ Իսկ քաղաքներն արդարև ոչ թէ առաւել չքաւորութենէ, այլ ուրիշ մնոտի պատճառներէ չեն յաջողած ունենալ ուսումնական պայծառ վիճակ (1)։ Փառք Աստուծոյ, այս միջոցին քանի մը Ընկերութիւն կազմուելով ատ, ի Հայաստան դպրոցներ բանալու մեծ ճիգ մը կայ. անհուն շնորհակալիք այնպիսի ազգասէր և առանդո՛ւն անձանց։

Բայց պիտի ասէք, դոնէ դուք վարդապետներդ դպրոց բանալու էք. այո՛, բանալն ու անուանակոչելը դիւրին է, և այս է որ

(1) Օրինակ՝ Կարինը, ուր ազնուական դասն իւր հաշուոյն ունի առանձին վարժարան, որով աղջկայինն անկելանոց դարձած է աղքատին աղայոցը։ Եւ Երզնկա, որ իւր չորս եկեղեցիները չորս թաղի բաժնուած՝ չորս հակընդէմ դպրոցներով ուժէ անկած է։ Եթէ միաբանութեամբ գործեն Կարին և Երզնկա, յայտ է թէ միեւնոյն ծախսով որպիսի յառաջադիմութիւն պիտի ունենան։

տեղեկագիրներու մէջ դպրոցներ կը յիշուին, այլ բացուելէ յետոյ կը գոցուին. պատճա՞ռ. — Ա. Ժողովրդեան այս հաւատքը թէ դրել կարդալը եկեղեցականաց յատուկ է, իսկ ի՛ր ենց համար անպէտ և անօգուտ. Բ. աղքատութիւն. որով ընտանեաց անկարելի է աղաքնին ամրան ի դպրոց յղելը. Գ. դրքի, թղթի մանաւանդ քերականներու չգոյութիւն. Դ. դպրոցական պիտոյքներու փոխադրութեանը համար անտանելի դժուարութիւններ (1). Ե. տիրացուներու կամ վարժապետացուներու քչուորութիւնը։ Արդ՝ այն երկրին մէջ՝ ուր դատիարակութիւնը պարտաւորիչ չէ և նիւթական միջոցներ չկան, ի՞նչպէս կարելի է միայն բարոյական միջոցներով ուսումը տարածել . . . ։

Հայաստանի այս ներքին վիճակի վրայօք, Տեարք և Տիկնայք, շատ լաւ տեղեկութիւն ունէին Լաղարէֆ և Տէր Ղուկասոֆ զօրապետք և ուրիշ Հայազգի պաշտօնաւորք։ Նոքա ինձ հետ ի Կարին, ի Կարս, յԱխալցխա,

(1) Օրինակ. Քաղի 40,000 էն աւելի ժողովուրդ կայ, բայց հեռագրատուն մը անգամ չկայ, որոյ հաստատութիւնն այնքան մեծ բան մը չէ, արդ՝ երբ այս այսպէս, ի՞նչպէս կարելի է յուսալ Թիւրքիայէն ճամբաներու շինութիւն, որոյ ծախսը յոյժ մեծ է։

ի Պայազիտ և ի Թիֆլիս երբ տեսակցեցան, ցաւ յայտնեցին թէ ի՞նպէս մինչև ցարդ Թուրքիոյ Հայաստանն այս օրինակ մոռցուեր է և լքուեր, մինչ Սուլթանին կառավարութիւնը Հայոց մի Սահմանադրութիւն շնորհած է, որով ազգին կը թողու իւր ներքին գործոց անկախ և ազատ մատակարարութիւնը։ Ո՛չ, չեմ կարող ուրանալ Ռուսահայ պաշտօնաւարացն առ հայրենիս բարձր զգացումները։ Սոքա արդարև մեծապէս նպաստեցին Ռուսի այն քաղաքականութեան, որ Հայը Հայաստանի մէջ թողուլ կը վճռէր։

Մինչ Թուրքիոյ Հայաստանեայք այսպէս, Ռուսահայք այժմ ամենամեծ ջանք ունին յառաջադիմութեան. ամեն ուրեք դպրոցներ կը բացուին, դրքեր կը տպուին և կը ցրուին, յանուն ազգի և հայրենեաց եռանդն ու խանդ կ'արծարծի. մինչ ժողովուրդն այսպէս, հոն եկեղեցականք ընդհակառակը դէթ ազգային եկեղեցւոյ շրջանակին մէջ գործելու կը դեղևին . . . ։

Տեարք և Տիկնայք, երբ ա՛լ վերջացած էր ուղևորութիւնս, ահա ի Թիֆլիս դոյժ հասաւ թէ Պայազիտցիք և Ալաշկերտցիք անտէր ըլլալնուն՝ դաղթելու վրայ են. ես կարսէն հոն չէի դացած, կարծելով թէ հոն ա-

ռաջնորդ վարդապետը պէտք եղած կերպով կը վարուի. մանաւանդ հոն երթալու պարտք ալ չունէի, զի կոնդակս դոնկրէէն յառաջ դրուած լինելուն, նշանակուած չէին այդ դաւառները. Թիֆլիսու լրագրական խմբագիրները թախանձեցին զիս, որ հոն հասնիմ. յէջմիածին հանդիպելէ յետոյ՝ որպէս զի Կաթողիկոսէն յանձնարարագիր առնում, զոր և չյաջողեցայ առնուլ, ի Պայազիտ հասայ։ Անմիջապէս ձիաւոր մարդ յղեցի յԱ-լաշկերտ Առաջնորդ Յովհաննէս վարդապետի, որ գիւղապետները ժողովէ ի վանս. և ես Պայազիտի կողմինները ժողովելով հոն հասնիմ, որպէս զի ժողովուրդն իւր գիւղապետներուն սպասելով չդաղթէ, և երկու օրէն Օսմանեանք հասնին և վախի տագնապը անցնի։ Մինչ այսպէս, դոյժ հասաւ թէ մի քանի գիւղեր դաղթելու վրայ են, եռանուն հասայ. յայտնեցի թէ դաղթելնին անօգուտ է, թէ այս անգամ Ռուսի Կայսրը դէմ է, և ոչ հող և ոչ փող պիտի տայ, այլ եռ պիտի դարձընէ, ահաւասիկ Պատրիարքէն ապահովութեան կոնդակ և Լաղարէֆն և Մեծ Դքսէն արդիլման հրամանագիր։ Լացին, վասն զի յիմարաբար կարծած էին թէ Ռուսիա իրենց պիտի օգնէ, ուստի և իրենց աղ-

ներն ու ցորէն և խոտեր այրած էին. եթէ յետոյ խակ դառնային, ի՞նչ պիտի ընէին...։ Ի վերջոյ յիկտիր այդ դաղթող ժողովուրդը հանդարտեցի և աղդային նպաստի վրայօք վստահեցուցի և դարձայ յէջմիածին։

Ահա այս երկրորդ դաղթականութիւնն ևս այս կերպ վերջացաւ, որ տեղի ունեցաւ միայն էջմիածնի անհոգութենէն, խօլական երկիւղի մը սոյն համբաւէն թէ Քրդերը պիտի ջարդեն Հայերը, նաև սոյն սուտ համբաւէն թէ Ռուսիա դաղթելոց հող ու փող պիտի տայ։ Իսկ առաջին դաղթականութեան պատճառն ահաւասիկ. Ռուսիոյ և Թուրքիոյ պատերազմին սկզբնաւորութեան ատեն Յովհաննէս վարդապետ Իւչ քիլիսէ վանքին պահպանութիւնը Քիւրտերու կը յանձնէ, փոփոխակի խոստում առնլով և տալով՝ որ Ռուսի դալու ատեն Հայք Քրդերը պահպանեն, և Թուրքի դալստեան ատեն չթողուն Քիւրտք որ վանքը կողոպտուի. այս միջոցին Տէր Ղուկասոֆի յառաջապահ դունդը հասնելով վանքը Թրքական ամրոց մը կարծելով կը յարձակի, և ռմբակոծելով վանքը, կ'այրէ կը կործանէ բայց ի հսկայաչէն տաճարէն, ուր և Քրդերը մի առ մի ոչխարի պէս կը մորթուին. իսկ վարդապետն իբր Թիւրքերուն

կողմնակից և Ռուսական բանակին արհամարհող խաչիւ և բուրվառով չդիմաւորելուն պատճառաւ՝ Տէր Ղուկասոֆէն կը յանդիմանուի. սոյն օրինակ Հայոց վանքին մէջ Քրդերու սպանութիւնը բնականաբար տրխուր տպաւորութիւն կընէ շրջակայ Քրդերու վրայ ի մասին Հայոց հաւատարմութեան և անկեղծութեան, ուստի երբ քիչ ատենէն Ռուսական բանակը կը հարկադրուի յետս նահանջել Օսմանցւոց բանակի առջևէն, Հայք խաբուելով սոյն համբաւէն թէ Քրդերը վրէժ պիտի լուծեն և թէ զՀայեր չարդելով Վանայ կողմերէն արդէն կուգան կը հասնի, անմիջապէս եղնավար սայլերնին լծելով առհասարակ դաղթելու կ'ելնեն։ Այս խուռն անկարգելի դաղթականութիւնը Ռուսական բանակի փախստի ընթացքին անդամ արդելք լինելուն՝ Տէր Ղուկասոֆ թնդանօթի որոտումներով ճամբայ բանալ կը հրամայէ...։ Այս դաղթականութիւնը կը պատահի ամառուան ամենախիստ տաքերուն, և ժողովուրդը սարսափելի մահու կոտորած կը կրէ Երևանայ դաշտի և Էջմիածնի մօտը։ Բայց Քրդերու կողմէ ըլլալիք այդ կոտորածն արդեօք ստո՞յգ էր. ո՛չ, վասն զի այն Հայեր որ յամառելով չէին դաղթած մնա-

ւանդ քաթոլիկներ, ամենևին այդպիսի կոտորածի չեն հանդիպիր, միայն թէ քանի մը դիւղերու մէջ քանի մը Հայեր սպաննուեր են Բիւրտ և Թուրք դասալիքներէ։ Նոյնպէս Իսմայիլ Հաղդը վիլայէթի ղօրաբաժինը Պայազիտը երբ կը պաշարէ, Ռուսք ներսէն և Օսմանեանք դրսէն հետզհետէ անընդհատ 22 օր թնդանօթի ռումբերով զիրար հարուածած ատեն՝ 90 էն աւելի Հայեր կը մեռնին, մինչև Տէր Ղուկասոֆ կը հասնի. և Պայազիտցի Հայք այս միջոցին Թիւրքերէն կը կողոպտուին և սարսափահար կ'ապաստանին ի Մակու քաղաք Պարսկահայոց, ուր Պատրիարքարանէն հասած նպաստին վրայ յոյժ կը գոհանան։

Բիչ մ'ալ Խիկարի վրայ խօսիմք, Տեարք և Տիկնայք. սա Եղոբոսի և Նասրէտտին-խօճայի նման ամէն տեղ իւր անուն ու յիշատակութիւն ունի (1)։ Այսպիսի համբաւաւոր

(1) Խիկարի անուամբ եղած Հաշար և Դէյ առածներն ի ձեռն Գեր. Գաբրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան տպուած են ի Կ. Պոլիս։ Իսկ առակներէն յիսունը ցարդ անտիպ եւ զուտ Հայկական պիտի հրատարակեմ երբ միջոց ունենամ։ Նոյնպէս Հայաստանի բոլոր գիւղօրէից եւ քաղաքաց ցանկի եւ ուրիշ այլ եւ այլ գիտելեաց տպագրութեանը պիտի գործածուի սոյն գրքուկին հասոյթը։ Այս ալ ձեր նահատակու-

մարդու մը վրայ կը ձգուին այն ամէն առածներ և առակներ, որք պառաւ ու ծեր պապիկներու և մամիկներու բերնին մէջ կան, և շատն ալ քիչ քիչ Թրքանալով և Քրտանալով ազգային յատկանիշնին ալ կորուսանելու վրայ են. այս մասին Հայաստանի աշուխները յիշելով կրնաք համոզուիլ բսածիս ճշմարտութեանը։ Հայ աշուխք յաճախ ամէն տեղ մինչև վանքերու բանայիրներու մէջ անդամ իրենց տաղն ու երգ գրեթէ հայերէն չեն գրուցեր, այլ առաւել քրդերէն և Թրքերէն, հետևաբար այսօր շատ քիչ Հայկական շէնք շնորհք տաղերդ և կամ գրոյցներ ունիմք, ընդհակառակը քրդական և Թրքական խիստ շատ, որոց հեղինակներն ամէն տեղ և ամեն ատեն Հայեր են եղած։

Ահա մի առակ. օր մը օձն աղուէսին կըսէ. «Նայէ դուն անասուններուն մէջ ամենէն խելացին ու խորամանկն ես, ես ալ սողուններուն մէջ, ուրեմն սիրով և խորհրդով իրարու հետ ապրինք ու տիրենք նոցա»։ Եւ կը միաբանին. բայց դի չարերուն միաբանու-

Թեան բաժինն է, ո՛վ խեղճ աղդի մը մատենագրապէս ծառայողներ, մէկ կողմէն ապագրութեան եւ միւս կողմէն հրատարակութեան նիւթ ճարել եւ ծաւալե՛լ . . .։

թիւնը տեւական լինել կարելի չէ, օրին մէկ ջրի մը մօտ օձը կանգ կ'առնու. աղուէսը կը հարցնէ թէ «ինչո՞ւ չանցնիր ջրէն անդին. — ի՞նչպէս անցնիմ, երբ լողալ չգիտեմ. — այդ ալ բա՞ն է, վիզս կը պլլուիս, և գլուխդ կ'անցընեմ»։ Երբ ջրէն ելնելու կը մերձին, օձն ըստ որում չար ի բնէ, «սխմեմ աղուէսին վիզը և թող սատկի, յետոյ ես դլխին ծուծը կուտեմ». երբ այս խորհածն ի գործ դնել կ'սկսի, աղուէսն այն ատեն կ'սթափի. բայց ի՞նչ ընէ, թշնամին վզին փաթթուած է, ուստի հառաչանօք լեզու կը թափէ, «ա՜հ, կը զդամ թէ մահս մօտեցած է, պզտիկցուց ի վեր ջղային ցաւ մը ունիմ, որ զիս ցնցելով խղդելու կը հասցնէ. շատ ատեն սիրով ապրեցանք, ի նշան սիրոյ ի՞նչ կըլլար, դլխիկդ երկընցընէիր պաչիկ մը առնէի և մեռնէի»։ Օձը հուսկ կը համոզուի, և դլխիկը կ'երկարէ. իսկ աղուէսն յանկարծ կը թոթթուրուի և կը յաջողի օձին դլուխը բերնին մէջ ակռաներուն տակ առնլով ճզմել և սատակել։ Ջրէն աղուէսն ելնելով՝ օձն ալ վրայէն վար կը նետէ. որովհետև օձերը սատկած ատեններին երկար բարակ կը փռուին, աղուէսը կը դառնայ և օձին ականջն իվար կը փսփսայ. «օձուկ աղբար, աշխարհիս մէջ ընկերաբար ապրելու

համար, ինչպէս երկար բարակ շտկուեր ես, սրտով ալ ատանկ շիտակուկ ըլլալու է, և ոչ թէ ծուռիկմուռիկ»։

Ա՛լ բաւական կը համարիմ խօսիլս, Տեարք և Տիկնայք, թողլով Վանն ու Մուշը. ամէն ուրեք ես Հայը քննեցի և զննեցի, զոր և համառօտ մը ձեր առջև դրի. ահա առջևնիդ կայ Հայաստանը, վիրաւո՛ր և հոգեւարք։ Կը խոստովանիմ թէ փրկութիւնը կարելի է, երբ Հայն լուսաւորուի. զի այն աղդեր, զորս յիշեցի, Հայուն հետ արդէն բնակակից են, և շահերով իրարու հետ կապուած, խառնուած և զուգուած, և թէ դիր ու դպրութիւն չունին, և թէ թուով (1) և թէ բարոյական և միչև իսկ նիւթական վիճակով Հայէն ստորին են։ Սոքա պիտի խոնարհին, զի անկարելի է, որ այսուհետև լոյսը խաւարին տեղի տայ, և յաղթանակը գործունեայ և բարոյական մարդուն կամ ժողովրդեան չը լինի։

Ձեր ուրեմն, ո՛ աղնիւ Տեարք և Տիկնայք, երբ սրտին թելերը կը թրթռան ի յուշ հայրենեաց, մի՛ վհատիք. հաւատացէք, զի հա-

(1) Թիւրքք քաղաքաց եւ Հայք դաշտերու մէջ իսկ Քիւրտք լեռներու վրայ համեմատաբար թուով աւելի են ամեն ուրեք. բայց միահամուռ՝ Հայք աւելի են թուով։

յաստանի բնական դիրքն իսկ կարող է Հայը փրկել, եթէ փայլուն բայց սուտ խոստումներէ և խօսքերէ, պայծառ բայց խարդախ ձևերէ զգուշանալով ըստ դրծեմք։ Ցիշեցէք, թէ դուք սերունդ էք այն ազնիւ ազգին, որ հին է իւր պատմական կեանքով, որ ազնուականն է իւր առաքինութեամբ, որ ճարտարն է տուրևառով, որ վեհն ու գեղեցիկն է իւր հոգւովն ու մարմնով։ Ցիշեցէք, որ դուք այն ազգէն էք, որ առաջին անգամ մարդկային ամբարշտութիւնը պատժեց իւր Հայկովը, որ 34 տարի կռուելով մերթ Պարսից և մերթ Յունաց դէմ իւր ազգային անկախութիւնը պաշտպանեց իւր հէք Արշակովը, որ առաջին անգամ Հերթանոսութեան դէմ կռուելով Խաչը պաշտպանեց իւր Կարմիր Վարդանովը, որ առաջին անգամ Մշոյ դաշտի մէջ Մահմեդականութեան դէմ կռուելով Խաչը դրկեց իւր Տիրանովն ու Սուրբ բանակովը։ Ցիշեցէք, որ դուք քանի կենդանի էք, կենդանի՛ Հայ հոգւով, կենդանի՛ Աշոտայ սրտով, կենդանի՛ Ռուբէնի եռանդով, հաւատացէք թէ Հայաստան կենդանի է, կենդանի՛ պիտի մնայ, ազատ և անկախ և փառաւորեա՛լ։

ԱԶԳԱՀԱՄԱՐ ԲԱՐՁՐ ՀԱՑՈՑ

Ռուսահայք	1,000,000	
Կարին, Խնուս, Բասեն, Պայազիտ, Բաբերդ, ԸՍպեր, Կիսկիմ, Բորթուս եւ Գղի	120,000	Հայ
	90,000	Թիւրք
	35,000	Քիւրտ
	40,000	Զազա
	10,000	Թիւրքմէն
	5,000	Եէզիտի
	2,500	Չէրքէս
	5,000	Յոյն։
Երզնկա, Կամախ, Քուրիչայ, Կերճանիս, եւ Խոզաթ եւ Օվաճըզ . .	50,000	Հայ
	40,000	Զազա
	35,000	Թիւրք
	5,000	Քիւրտ։
Մուշ	127,000	Հայ
	20,000	Թիւրք
	20,000	Քիւրտ
	15,000	Զազա
	6,000	Չէրքէս։
Վան	184,000	Հայ
	90,000	Քիւրտ
	20,000	Թիւրք
	80,000	Ասորի։
Սղերտ	40,000	Հայ
	30,000	Քիւրտ
	5,000	Արաբ
	7,500	Զազա
	18,000	Եէզիտի։
Տիգրանակերտ բայց ի քաղաքէն	40,000	Հայ
	7,000	Թիւրք
	35,000	Քիւրտ
	25,000	Զազա
	16,000	Ասորի։

10 հ

ՀՀ Ազգային գրադարան
NL0001659

ՀՀ Ազգային գրադարան
NL0001660

5594-5600

ՀՀ Ազգային գրադարան
NL0001661

ՀՀ Ազգային գրադարան
NL0001662

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0001663

ՀՀ Ազգային գրադարան
NL0001658

ՀՀ Ազգային գրադարան
NL0001561